




ԵՐԳԱՀԱՆ  
ՆԻԿՈՒ  
ԳԱԼԱՆԴԻՐԵԱՆ

ԽՐԱԳՐԵՑ՝  
ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԹԻՖԼԻՍ, 1947



78(47.925)(092 Գալաւրդեան)  
Ե՝ 77

Գիտական 2 հրատարակութիւն

ՍՏՈՒԳՎԱՆ Է 1961 թ.

ԵՐԳԱՀԱՆ

ՆԻԿՈԼ ԳԱԼԱՆԴԻՐԵԱՆ

(Նրա կեանքի եւ երաժշտական արւեստի հիմնական գծերը)

Խմբագրեց՝ Յ.ՐԱՍՆ ԵՐԵՎԱՆ



PLATE 1

PLATE 1

Handwritten text below the title, possibly a description or caption.

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or date.

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ամբողջ երեք տարի է, որ մեզանից ընդմիջտ բա-  
ժանել է վաստակաւոր երգահան և մեր անմոռանալի  
խմբավար Նիկոլ Գալանդերեանը, որի մահով հայ երաժը-  
տական արւեստը զրկւեց իր մի լաւագոյն ստեղծագոր-  
ծողից։

Ճիշտ երեք տարի է, որ արւեստագէտն անվե-  
րադարձ մեկնել է, բայց նա ապրում է մեր սրտե-  
րում իր գունազեղ և թովիչ երգերով, որոնցից շատերն  
այսօր հնչում են ոչ միայն Իրանի հայաբնակ քաղաքնե-  
րում, այլև գաղութներում ապրող հայ ժողովրդի մէջ։ Նրա  
երգերը, անկասկած, երաժշտասէր հայ հասարակութեան  
լայն խաւերի սեփականութիւնը կը դառնան և նրանք հը-  
նարաւորութիւն կունենան ծանօթանալու երգահանի ստեղ-  
ծագործական հարուստ տւեալների հետ, երբ մի գեղեցիկ  
օր լոյս կը տեսնեն նրա բոլոր անտիպ էջերը։ Դա մի վեհ  
ծրագիր է, որը տարիներ շարունակ եղել է «Գալանդերեան»  
երգչախմբի հիմնական նպատակներից մէկը, բայց, դժ-  
բախտաբար, տէխնիկական և այլ հանգամանքների պատ-  
ճառով հնարաւոր չի եղել իրագործել։

«Գալանդերեան» երգչախումբը նախագծել էր մի  
այլ գեղեցիկ ծրագիր—պատշաճ գրքոյկով գեղարւեստասէր  
հայ հասարակութեանը ծանօթացնել երաժշտագէտի կեան-  
քի հիմնական գծերի ու նրա ստեղծագործութիւնների  
էական առանձնայատկութիւնների հետ։ Ահա այդ ծրագիրն  
երգչախումբն այսօր իրագործում է՝ հրատարակելով այս

գրքոյկը. Սակայն, երգեցիկ խումբն ունի մի այլ բարոյական պարտականութիւն—երաժշտագէտի հողաթումբը դարգարել մի գեղեցիկ յուշարձանով: Այդ նպատակով էլ որդի է սոյն գրքոյկից գոյացած նիւթական հասոյթը դրամական ֆոնդի վերածել և իրագործել մահարձանի կառուցումը: Մինչ այդ՝ այս գրքոյկը թող լինի «Գալանդերեան» երգչախմբի յարգանքի, սիրոյ և երախտագիտական ջերմ զգացումների ցայտուն կոթողը, նւիրւած վաստակաւոր երաժշտի պայծառ յիշատակին:

Վերջում շնորհակալութեամբ նշում ենք, որ այս գրքոյկի խմբագրութիւնը, «Գալանդերեան» երգչախմբի դիմումով, սիրով կատարեց յայտնի բանասէր-քննադատ պ Արամ Երեմեանը, որի գրչին են պատկանում «Նիկոլ Գալանդերեանի կեանքի և երաժշտական արւեստի հիմնական գծերը» խորագրով շահեկան յօդւածի նիւթերը:

Շնորհակալութիւն նաև իրանահայ բանաստեղծ և նկարիչ պ. Մարգար Ղարաբեգեանին, որ սիրայօժար վերջինից գրքոյկի գեղարւեստական շապիկը:

«ԳԱԼԱՆԴԵՐԵԱՆ» ԵՐԳՉԱԽՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Քէլրան

18 Յունիս 1947





Երզնկու Ն. ԳՕ.Լ.Ե.ԳԴԵՐՆԵ  
1881 - 1942



## Ա.

# ՆԻԿՈԼ ԳՆԼԱՆԳԵՐԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԻԵՍՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԵՐԸ

### I

#### ԵՐԱԺԻՅՏԸ

Իրանահայ երաժշտութեան պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ է զբաւում երգի վաստակաւոր ուսուցիչ և հանրածանօթ երգահան Նիկոլ Գալանդէրեանը, որ երեսուն երկար ու ձիգ տարիներ յօրինել է նորանոր երգեր և իր ստեղծագործութիւններով զարդարել հայ երաժշտութեան գանձարանը: Ամբողջ երեք տասնեակ տարիներ աշխատել է նա երգի և երաժշտական արւեստի ասպարիզում: Այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդին նւիրել է հազարի շուրջ գունագեղ երգերի մի մեծ և գողտրիկ ծաղկեփունջ, որի շնորհիւ էլ նա անպայման ուրոյն սեղ է զբաւելու հայ ստեղծագործող երաժիշտների շարքում:

Կարգացէք նրա կեանքի պատմութիւնը, ծանօթացէք նրա ստեղծագործական աշխատանքների հիմնական էջերի հետ և դուք այնտեղ պիտի տեսնէք միայն մի վեհ նպատակ, մի անսահման ձգտում, մի սրբազան կրակ — հայ երգի ու երաժշտութեան զարգացումը և ժողովրդի գեղարւեստական դաստիարակութիւնը: Ահա այն բարձր իդէալը, որ նա ընդգրկել է ամբողջ երեսուն երկար տարիներ: Ստեղծագործել է նա՝ միշտ նւիրւած իր սիրած

արւեստին։ Աւելի բնորոշն այն է, որ նա իր ամբողջ կեանքում անսայթաք ընթացիկ է այդ սրբազան ուղիով և երբէք չի դաւաճանել իր պարզած դրօշին։ Անգամ նիւթական ու բարոյական բոլոր դժւարութիւնները, ապրուստի մտահոգութեան ծանր պայմանները, նոյնիսկ իր ընտանեկան կեանքի աններդաշնակ դրաման, երբէք չեն կարողացել հանգցնել նրա հոգում բոցավառող երաժշտութեան սէրը։ Հայ հասարակական գործչին վայել անվեհերութեամբ ու տոկունութեամբ քայլել է նա դէպի զոհաբերութիւն, միշտ հաւատարիմ մնալով իր իդէալին։ Այդպէս է թելադրել նրան իր ներքին ձայնը, իր վեհ ու բարձր կոչումը։ Նշենք և այն յուզիչ իրողութիւնը, որ արւեստագէտը հայ երաժշտութեան նւիրած իր բաղմամբիւ երգերը, օպերէտները, օպերաները, մեծ մասամբ, ձայնագրել է ու ներդաշնակել ամենածանր պայմաններում՝ լքած ընտանիքից, քաշած մի փոքրիկ անհրապոյր սենեակում, մերթ մի կտոր հացի ու մի բաժակ սև սուրճի առջև նստած, մերթ ցրտի հարւածների ներքոյ, յօրինել է նա, միշտ հաւատարիմ իր կոչմանը, մոռացութեան տալով իր անհատական երջանկութիւնը, երևոյթներ, որոնք իսկական արւեստագէտի յատկանիշներ են։

## II

### ԱՐԻԵՍՏԱԳԵՏԻ ԿԵԱՆՔԻ ԷՎԿԱՆ ԷԶԵՐԸ

Պարզ ու անպաճոյճ արտաքին, համեստ բնաւորութիւն, զգայուն ու բարի սիրտ, երաժշտական բնածին ու հաբուստ տւեալներ, ստեղծագործելու անսահման տենչ և բառիլայն իմաստով իդէալիստ—այդպէս էր Գալանդէրեանը։

Անցնում էր նա փողոցով մեն-մենակ, հեռու կեանքի ժխորից, աչքերը յառած գետին, գլխիկոր, ինքնավար, քայլում էր հանդարտ՝ երգը շրթերին։ Դա նոր եղանակի ուրազբծն էր։ Այդպէս էր և իր սենեակում, Ան-

պաճոյճ սեղանի առջև նստած, մոռացած ամէն ինչ, զբոսում էր հնչիւնները, փոխում ձայների ելէշները, տալիս էր նրանց նոր երանգ, նոր ուրիշ և նոր ներդաշնակութիւն: Դա երգն էր սիրող սրտերի, կարօտ հոգիների, հայ ժողովրդի վշտոտ ապրումների և վերջալոյսի նուրբ շողերի: Այդպէս՝ ապրում էր նա միշտ զգացումներով, յոյզերով և երգերով:

Նա օժտւած էր հայ ժողովրդին բնորոշ մի այլ գեղեցիկ յատկութեամբ—աշխատասիրութեան աննկուն ոգով: Այդ յատկանիշը դրոշմել էր նրա հոգում իր ծննդավայրի հողն ու ջուրը: Դա Ակն է, ուր ծնւել է նա 1881 թւի Սեպտ. 7-ին, Վերի-Թաղում, մի համեստ կօշկակարի ընտանիքում: Այդ պատմական քաղաքի «Նարեկեան» զրպրոցում էլ նա ստանում է իր նախնական կրթութիւնը և ժամանակի պահանջի համաձայն՝ Գիրակի օրերն եկեղեցում շապիկ հագնում: Այդ հանգամանքը նրան հնարաւորութիւն է տալիս ծանօթանալու եկեղեցական, գլխաւորապէս շարականների, երաժշտութեան հետ: Նրա հայրը, տնտեսական ծանր պայմանների պատճառով, անցնում է Կ. Պօլիս, ուր տեղի ունեցող 1896 թւականի մռայլ դէպքերը խորապէս յուզում են հայ ժողովրդի կեանքը: Նոյն թւին, Բանկ Օթոմանի ցոյցին յաջորդող հայկական ջարդի ժամանակ, Կ. Պօլսում սպանւում է նրա հայրը: Սեպտեմբերին, Ակնի ժողովրդի կոտորածին, զոհ է գնում մեծ եղբայրը, իսկ փոքր քոյրը՝ Մարանը, իրենց վառւող տան բոցերի մէջ այրւում: Մահից հազիւ ազատւում են մայրը, ինքը և փոքր եղբայրը, որ, շատերի նման, ընկնում են ծայր աստիճան թշուառութեան մէջ: Այդ ժամանակ օգնութեան է հասնում մեծ հայրը, որ ջարդի շրջանում գաղթում է Բուլգարիա: Յաջորդ տարին, 1897 թւականին, Նիկոլը, իր վշտահար մօր և փոքր եղբօր հետ, փոխադրւում է Վառնա, ուր ազգային վարժարանում սովորում է

ամբողջ երկու տարի, իսկ ամառուայ դպրոցական արձակուրդներին «Իրաւունք» թերթի տպարանում զբաղւում է գրաշարութեամբ։ Ահա այդ շրջանում նա, իր խնայած փողերով, գնում է մի օկարինա\*) և մի սրինգ (ֆլւէտ), որոնց վրայ ինքնաշխատութեամբ սովորում է նւագել։

1899 թւի Սեպտեմբերին կեանքի ալիքները պատանի Նիկոլին տանում են Պետերբուրգ, ուր ապրում էին քեռինները, իսկ 1900 թ. Յունւարի 15-ին նրան և եղբորը տեսնում ենք էջմիածնի «Գէորգեան» Ճեմարանի հինգերորդ դասարանում։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ վանքի Մայր-տաճարում անմահ Կոմիսսարի քառաձայն երգեցիկ խումբը հնչեցնում էր պատարագը, իսկ դպիրները փայլ էին տալիս եկեղեցական երաժշտութեանը։ Այդպեղ, դպիրների խմբում, Նիկոլը ծանօթանում է ոչ միայն հայկական ձայնանիշների և եկեղեցական երաժշտութեան նըրբութիւնների հետ, այլև նրա հոգում բոցավառւում է երգի ու երաժշտութեան սէրը։

— Այդ դպիրների խմբի հայկական նօթաներով շարականներ երգելը,—գրում է մեզ երաժիշտը,—ինձ շատ նպաստեց ապագային, որպէսզի ծանօթանամ, սովորեմ և ուսումնասիրեմ հայկական նօթաներն ու եկեղեցական երաժշտութիւնը։

Ամբողջ երեք տարի նա «Գէորգեան» Ճեմարանում ուսանելուց յետոյ, 1903—3 ուսումնական տարւայ Նոյեմբերին դպրոցից դուրս է գալիս և վերադառնում Վառնա, ուր հաստատուել էին մայրն ու մեծ հայրը։ Այդ ժամանակ մի աւստրիացի չեխ ատաղձագործի, յետոյ բուլղարացի Գրիգորի մօտ սովորում է կահ-կարասի պատրաստել, նշանակւում է նաև «Բարկէն-Սիւնի» գրադարան—ընթերցարանի գրադարանապետ, միաժամանակ մասնակ-

\*) Կոնաձև կաւէ գործիք նւագելու, 10 ծակով։ Ա Ե.

ցում է տեղի երգեցիկ քառաձայն խմբին: Յաջորդ տարին, 1904—6 ուսումնական շրջանում, պաշտօնավարում է Բուլղարիայի Շումեն քաղաքի հայոց դպրոցում՝ իբրև երգեցողութեան ուսուցիչ, թէև ձայնանիշներին դեռ ծանօթ չէր, բայց շուտով լրացնում է այդ պակասը՝ օգտւելով Միլանում տպւած երաժշտական մի թերթից: Այդ ժամանակ էլ կազմում է մանդոլինի մի նւագախումբ՝ բուլղարացի ուսուցչի ղեկավարութեամբ: Սակայն, երկու ամիս անց խումբը ցրւում է և նա կազմում է մի երգեցիկ խումբ, որ նոյնպէս կարճ կեանք է ունենում: 1906 թւին նա նորից վերադառնում է Վառնա և մինչև 1910 թւականը պաշտօնավարում տեղի ազգային դպրոցում, երգեցողութեան, յետոյ նաև աւագ-ուսուցչի պաշտօնով: Այդ շրջանում նա, իր անհատական նախաձեռնութեամբ, գաւառացի աշխատաւորների համար, բանում է զիշերային մի դպրոց, ուր ամբողջ երկու տարի նրանց ձրի գրել-կարդալ է սովորեցնում: Այդ երեոյթի պատճառը երաժիշտը մեզ գրած նամակում բացատրում է այսպէս.

— 1908—10 ուսումնական տարիներում, Վառնայում պաշտօնավարութեանս միջոցին, գաւառացի աշխատաւորներն իրենց ստացած նամակներն ինձ կարդալ էին տալիս. պատասխանն էլ նոյնպէս ես էի գրում: Այդ բանն իմ մէջ միտք յղացրեց, որ ես նրանց համար զիշերային դպրոց բացեմ անհատական նախաձեռնութեամբ և գրել-կարդալ սովորեցնեմ: Երկու տարի նրանց հետ ձրի պաթապեցի, այնպէս որ վերջում իրենց ստացած նամակներն իրենք կարդում և իրենք էլ պատասխանը գրում էին:

Նոյն շրջանում կազմում է նաև մի գրատուն, միաժամանակ մասնակցում տեղի 18 հոգուց բաղկացած մանդոլինի և կիթառի «Սոխակ» նւագախմբին: Նոյնպէս հիմք է դնում 7—8 հոգուց բաղկացած մի նւագախմբի, որի համար երգեր է մշակում ու սովորեցնում: Խումբը հազիւ

5-6 ամիս է շարունակում իր գոյութիւնը, բայց նա չի յուսահատուում. գնում է մի կիթառ ու մի ջութակ և ինքնաշխատութեամբ նւագել սովորում, իսկ իր ազատ ժամերը նւիրում ձայնագրութեան: Նշենք և այն, որ Վառնայում նա երաժշտական խոր տպաւորութիւններ է ստանում ծովեզրեայ գեղեցիկ պարտիզում նւագող զինւորական երաժշտախմբից:

— Երաժշտախմբի սիմֆոնիան, ծովի համերգը և բընութիւնը,— գրում է մեզ արւեստագէտը,— կազմում էին աշխարհի ամենագեղեցիկ սիմֆոնիան: Շաբաթն երեք օր այդ պարտիզում հոգեկան ամենամեծ հաճոյքը լիովին վայելում էի:

1910 թւի ամբանը փոխադրում է Թիֆլիս, ապա 1910—1911-ին, որպէս երգեցողութեան ուսուցիչ, հրաւիրւում է Սուխումի շրջանի Ծեբելդա գիւղը, ուր հայկական ձայնանիշներով տպագրւած պատարագի արարողութիւնն ամբողջութեամբ փոխում է եւրոպականի: 1911 թ. Մայիս 11-ն երաժշտագէտի կեանքի համար մի ուշագրբաւ տարեթիւ է: Այդ օրը նա յօրինում է իր նշանշանակաւ առաջին նոգը: Դա լինիք բանաստեղծ՝ Աւետիք Իսահակեանի «Այս, այնորդ արեւ ու մութ» խորագրով ոտանաւորն է: Այնուհետեւ, ամառւայ ընթացքում, ձայնագրւում է նոր երգեր—Ա. Իսահակեանի «Մութը գրկած» և «Արագին», Յովհ. Յովհաննիսեանի «Ալագեազ բարձր սարին», Շուշանիկ Կուրղինեանի «Սարի բլբուլը», Ազա-Նեզրիից և այլն: Նոյն թւի Օգոստոսին նորից անցնում է Թիֆլիս և ձայնագրում մի քանի նոր երգեր՝ «Կուզես լինեմ»—Վ. Տէրեանի, «Այ վարդ աղջիկ»—Յ. Յովհաննիսեանի, «Էյ աստղեր»—Յովհ. Թումանեանի և «Զմեռն անցաւ»—Աւ. Իսահակեանի:

1911—12 թ. ուսումնական տարում, Թէհրանի «Հայկազեան» դպրոցի հոգաբարձութեան հրաւերով, անց-

նում է մայրաքաղաք՝ իբրև երգի ուսուցիչ, Այդ շրջանում ձայնագրում է Վահան Տէրեանի մի քանի ոտանաւորները — «Ես սիրում եմ», «Կախարդական մի շղթայ կայ»։ 1913 թ. ամուսնանում է Թաւրիզեցի մի օրիորդի հետ, որից ունենում է երկու դուստր, Այդ տարի ձայնագրում է Յ. Թումանեանի «Չարի վերջը» մանկական պիէսը, Ամբողջ չորս տարի հայոց երկսեռ դպրոցում պաշտօնավարելուց յետոյ հրաժարւում է։ 1913—24 թւականի երաժշտական աշխատանքների մասին արւեստագէտը մեզ գրում է հետևեալը.

— 1913—24 թ., ըստ արտաքին երևոյթի, իմ ամուլութեան կամ դադարման շրջանն է, սակայն, ընդհակառակը, արւեստի աւելի լայնօրէն ուսումնասիրութեան կամ խորացման շրջանս է, երբ իմ մտաւոր պաշարը շատացրել եմ թէ՛ կարգալով, թէ՛ թարգմանելով և թէ՛ ուրիշների ձեռնարկած կազմակերպութեան օգտակար դառնալով։ Այս շրջանին մասնակցել եմ հասարակական գործերին և թատերական ներկայացումներին։ 2—3 տարի անընդհատ, առանց ընդմիջումի, ձախերի բացած գիշերային դպրոցում ձրի դասաւանդել եմ Թէհրանում, մինչև որ իրենք իրենց ձեռքով բացած դպրոցը կազմալուծել են։

1924 թւականին նա երևան է գալիս երաժշտական նոր երգերով, որոնց խթան է հանդիսանում երգիչ պ. Արա Տէր-Յովհաննիսեանը, ձայնագրում է 8 կտոր մանկական ոտանաւորներ — «Ծիծեռնակին», «Ծիտիկ-միտիկ», «Կաջադակ», «Օր-օր», «Ծտի հարսանիքը» և ուրիշներ։

1925 թւականին Թէհրանում ծածանում է իր համերգային գործունէութեամբ առաջին դրօշը, Այնուհետև նա այդ գծով քայլում է անվկանդ, մինչև 1944 թւականը, Ամէն տարի կազմակերպում է համերգներ, որոնց ծրագրի նիւթերը կազմում են իր երգերը։

— Այդ ձևով, — գրում է արւեստագէտը մեզ, — հասա-

րակութեան ծանօթացնում էի իմ երգերի հետ, քանի որ հնարաւորութիւն չունէի իմ գրածները հրատարակելու:

1925—30 թ. կառավարիչ-հաշւապահի պաշտօնով Թէհրանում ծառայում է մի տպարանում, բայց հազիւ 3—4 տարի է պաշտօնավարում: Այնուհետեւ երաժշտական գործիքների և զրամբքենաների վաճառման ու նորոգութեան խանութ է բանում և լծւում այլ աշխատանքների, սակայն, դարձեալ անյաջողութեան հանդիպում: Այդ դրութիւնը շարունակւում է մի ամբողջ տասնամեակ:

1935—37 թ., որպէս երգի ու երաժշտութեան ուսուցիչ, պաշտօնավարում է Մեշէդի հայոց դպրոցում: 1937—38-ին նոյն պաշտօնով աշխատում է տեղի «Մարգէ-վարի» պարսկական ուսումնարանում: Այնուհետեւ վերադառնում է Թէհրան և ամբողջապէս նւիրւում երաժշտական ստեղծագործութեան:

1942 թ. Մայիս 21-ն երաժշտագէտի կեանքի պայծառ և լուսաւոր օրն է: Այդ օրը Թէհրանում, արեւստասէր տիկ. Սաքեմիկ Ատեանի առաջարկութեամբ և «Գողթան» երգչախմբի նախաձեռնութեամբ, տօնւում է նրա երաժշտական գործունէութեան 30-ամեակը: Դա նրա արեւստի յալթանակի տօնն էր. նրա 30 տարւայ տոկուն, աննւաճ, տքնաջան ու բեղուն աշխատանքի, միաժամանակ երաժշտական որոնումների ու վերելքի տօնը, որի ընթացքում նա իր միտքն ու սիրտը նւիրել էր հայ երաժշտական արւեստի զարգացման վեհ գործին: Այդ օրը մայրաքաղաքի գեղարւեստասէր հայ հասարակութիւնը ջերմ և անկեղծ գնահատանքի արտայայտութիւններով ու ծաղկեպսակներով զարդարում է նրա վաստակաւոր ճակատը: Յորեկնական հանգէսներ կազմակերպւում են նաև Նոր-Ջուղայում, Մասչէդ-Սուլէյմանում, Ղազւինում, Ռաշտում և այլ անկերում: Ժողովրդական յարգանքի ու համակրանքի այդ ցոյցերը մխիթարական են այն տեսակէտից, որ

երգահանը գնահատուում է հէնց իր կենդանութեան ժամանակ:

Առանձնապէս յիշատակենք նաև Թէհրանում նրա կազմած երգչախումբը, սկզբում «Ռողոքան», իսկ յոբելեանից յետոյ «Կարաևրէրեան» անունով, որ մայրաքաղաքում ամէն տարի տալիս է համերգներ, բացառապէս իր ստեղծագործութիւններից, որոնց թիւը մինչև 1942 թիւը հասնում է 35-ի:

1944 թ. Մարտ 2-ին, Թէհրանի ք. Բահէրի հիւանդանոցում, երաժշտագէտն ընդմիջտ փակում է իր պայծառ աչքերը:

### III

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԼՏԿԵՐԸ

Դաւանդէրեանի երաժշտական արւեստը կարելի է բաժանել չորս հիմնական շրջանների:

Առաջին շրջանն ընդգրկում է 1904-1911 թւականը: Դա նրա երաժշտական գծով դարգանալու և ուսուցչական գործունէութեան ժամանակաշրջանն է: Դեռ մանկավարժական ասպարիզում նրա հոգում ոչ միայն բոցավառում է երաժշտութեան անսանձան սէրը, ոչ միայն նա նւիրում է երեխաներին դեղարւեստական երգի աշխարհում ապրեցնելու վեհ գաղափարին, այլև ձգտում է ստեղծագործական աշխատանքի:

Երկրորդ շրջանը, որ պատկերում է 1911—1913 թւականը, նրա ձևակերպման և երաժշտական գործունէութեան զրոսկորման ժամանակաշրջանն է: Այդ ժամանակ նրա ստեղծագործական գիմագիծը դեռ պարզ չէ, անորոշ է ու ապրտամ: Հէնց այդ երևոյթներով էլ պիտի բացատրել, որ այս շրջանում ձայնագրւած երգերում տեսնում էք միայն նրա արւեստի ռոռնումների պատկերը:

Երրորդ շրջանը, որ 1913—1924 տարեթիւն է, ըստ

արտաքին երևոյթի՝ նրա ամուլթեան կամ դադարի ժամանակն է, բայց ըստ էութեան որոնումների խորացումն և մասնագիտանալու շրջանն է։ Եւ իրօք, նա հետզհետէ ոչ միայն ձեւակերպւում է, այլև աւելի խորանում իր արւեստի մէջ, միաժամանակ նոր երանգներ է տալիս իր երգերին։ Ձայնագրում է նա մերթ արեւելեան, մերթ հայ ժողովրդական և մերթ եւրոպական ոճով։

— Սյդ երգերը, — նշում է Գալանդէրեանը մեզ գրած նամակում, — թէ՛ իրենց ամբողջական կառուցածքով և թէ՛ իրենց էութեամբ լիրիք են, իսկ արտաքին հիւսւածքով արեւմտեան, բայց խորքում արեւելեան ոգին է տիրապետում։

Զորրորդ շրջանը, որ արտացոլում է 1924—1942 թւականը, Գալանդէրեանի համերգային գործունէութեան և ձայնագրական արւեստի բոցավառ ժամանակաշրջանն է։

Սակայն, մի հանգամանք, որ այսօր աւելի արժէքաւորում է նրա երաժշտական դիմագիծը, դա նրա ստեղծագործական թափառումը, թափառումը ձիրքն է։ Ծանօթացէք նրա 30 տարւայ ընթացքում յօրինած մօտ հազար երգերի հետ և պիտի տեսնէք երաժշտական արւեստի մի գեղեցիկ պատկերահանդէս, ուր ձեզ գրաւում են նախ նրա յօրինած ա) Մեղօղիները — «Դաշտի երկչոտ ծաղիկներ», «Դարնան հետ նորից», «Աստղեր ու յուշ», «Ինչ բոց է, քոյրիկ», «Դարունն եմ սիրում», «Ինչպէս մի անուրջ», «Յլետանջ հոգոյս» և այլն։ Ահա և նրա բ) Սիրերգները (Romance) — «Ես սիրում եմ քո մեղաւոր աչերը խոր», «Մոռանալ, մոռանալ», «Ո՛չ տրտունջ», «Այնպէս նազիկ», «Արդեօք ուր ես», «Քնքոյշ երազում», «Արդեօք յիշում ես», «Աշուն է, անձրև», «Կարուսէլ», «Սև գիշերն է զըրկել ինձ» (Վահան Տէրեանից), «Կապոյտ աղջիկ», «Դու գնա հիմա», «Դու նորից եկել ես», «Շատերն եկան», «Եկւոր աղջիկ», «Ծովափին», «Ափսոսանք», «Մեկնում»

(Դե—Մ. Ղարաբէգեանից), «Մոռացել ես արդէն», «Սիր-  
տըս նորից», «Իջաւ նորից աշուն» (Լեոն Բզնունիից),  
«Իմ սէրը» (Յ. Թումանեանից), «Մի թունաւորիր» (Ար-  
մենուհի Տիգրանեանից) և այլ սիրային քնարական եր-  
գեր, որոնք իրենց երաժշտական հիւսւածքով բաժանոււմ  
են երեք էական մասի—1) Մեներգներ—«Սև ձին նստող»,  
«Էսօր եարս» (Ա. Իսահակեանի), «Մարմար քարէն»,  
«Հէյ, մարալ աղջիկ» (Շուշանիկ Կուրդինեանի), «Ով չի  
տեսել» (Գասպար Իփէկեանի), «Հէյ, մարալ աղջիկ» (Ա-  
բամ Երեմեանի), 2) Խմբերգներ—«Լուսնակ, դու լուսով»,  
«Լուսնակը շողէ շող», «Ես բլբուլ եմ, վարդ կուգեմ»,  
«Լուսնակը սարի տակին», «Զիւօ, զիւօ, զիզիւօ», «Մեր  
տան, ձեր տան մօտիկ», «Հրէս եկաւ», «Է՛յ, նինամ եար»,  
«Ջուրն եկաւ փին-լափին», «Մարեր ման կուգաս» «Հոփ,  
Մարալօ», ժողովրդական ոճով կառուցւած այս խմբերգ-  
ներն իրենց պարզութեան մէջ անյնքան անկեղծ են, գե-  
ղեցիկ և, որ էականն է, պահել են հայ ժողովրդական եր-  
գերի բնորոշ գծերն ու երանգները։ 3) Դուետներ—«Գա-  
րունն եկաւ», «Աստղերն են ժպտում», «Խաղաղ երեկոյ»,  
«Էս գիշեր», «Օ՛, ինչքան մշուշ» և ուրիշներ, որոնք ի-  
րենց կառուցւածքով ու երանգներով զխաւորապէս ան-  
հատական ապրումների, յոյզերի ու տենչերի, խորտակւած  
սիրոյ ու զգացումների հարազատ արտայայտութիւններ են։  
Սակայն, Գալանդէրեանի երաժշտական արեստտում ա-  
ռանձնայատուկ տեղ են գրաւում նրա ձայնագրած օպե-  
րաները, որոնք իրենց գեղարուեստական յօրինւածքով լուրջ  
և տոկուն աշխատանքի արդիւնք են։ Դրանց մէջ անպայ-  
ման բացառիկ տեղ է գրաւում բանաստեղծ Վահան Մի-  
րաքեանի «Լալալի որսը» պօէման։ Հմուտ արեստագէ-  
տի ձեռքով կերտւած այդ նուրբ և մեծ աշխատանքում  
լսում էք նոր եղանակներ ու ձայներ, իսկ բեմի վրայ  
տեսնում մի ամբողջ ժողովուրդ իր լեռնական առանձնա-

յատուկ կենցաղով և աւանդական սովորութիւններով։ Ուրոյն տեղ են զբաւում նաեւ հայկական գունագեղ պարերը՝ իրենց հարազատ ոճով, սիթմով և երանգներով։

Այնուհետեւ, 1931—32 թւականին Գալանդէրեանը ձայնագրում է մի նոր օպերա (3 գործ.)։ Դա Յովհաննէս Թումանեանի «Փառափառ» լէգենդան է, որի լիբրետօն կազմելիս նա հիմնական փոփոխութեան է ենթարկում աւանդութեան էական կառուցւածքը։ Բեմագրութիւնը կազմելիս մտնում է պատմութեան խորքերը՝ նախաքրիստոնէական շրջանը և պատկերում հեթանոսական դարաշրջանում ապրող հայ ժողովրդի կենցաղը, մասնաւորապէս նաւասարդեան տօները։ Նշեւք և այն, որ երաժշտութիւնը մշակում է զխաւորապէս խառն մեծ երգչախմբի (13 կըտոր) և սիմֆոնիկ նւագախմբի (14) համար։

1932 թւին արեւստագէտը հայ երաժշտութիւնը հարստացնում է մի նոր օպերայով։ Դա Վրթանէս Փափագեանի «Լուր-դաւ-շուր»-ն է, որ անւանում է «Հովիւ» (4 գործ.)։ Գրգական անգիր զրականութեան լաւագոյն հովւերգութիւններից մէկն է դա, որի տրեկեան վառ գոյներով ներգաշնակւած ջերմ երաժշտութիւնն ազդու է, խոր և տպաւորիչ։

Սակայն, ընդգծենք, որ Գալանդէրեանի երաժշտութեան պատմութիւնն այդ ստեղծագործութիւններով չի սահմանափակուում։ Նա անում է երաժշտական նոր նւաճումներ, այս անգամ յօրինելով ռանկակաւեւ երգեր, որոնք մի առանձին շարք են կազմում։ Բայց դա մի պատահական երևոյթ չէր, այլ ժամանակի հրամայողական պահանջը։ Որպէս երգի ուսուցիչ՝ փոքրիկների հանդէպ ունեցած անսահման սէրն ու գուրգուրանքը և նրանց երաժշտական աղքատիկ զրականութեան էջերը յուզում են երաժշտագէտի հոգեկան աշխարհը և նա երեխաների գեղարեւստական ճաշակը զարգացնելու, նրանց հոգիներն ու

որտերն ազնւացնելու վսեմ գաղափարով համակւած՝ ձայնագրում է մէկը միւսից սիրուն երգեր, որոնցից յատուկ ուշադրութեան արժանի են Ղաւնկալաւ օպերէտները՝ «Զարի վերջը», «Պօղոս-Պետրոս» (Յովհ. Թումանեանի), «Երեք արջեր», «Պապն ու շաղգամը», «Հօտաղ-հօտաղի», «Կնուկնք-կնուկնք», «Ծաղիկների երգը» (Յ. Թում.), «Համերգ», «Ծիծեռնակի գալուստը», «Ուլիկը», որոնց մեծ մասը քանիցս բեմադրւել են Թէհրանում, հոգեկան խոր հրճւանք պատճառելով երեխաներին: Այդ հանգամանքն էլ ընդգծում է այն, որ նա ոչ միայն կարողացել է թափանցել փոքրիկների հոգեկան աշխարհը, այլև մանկական արւեստի ստեղծագործական նիւթերի տեսակէտից կանգնել է ճիշտ ճանապարհի վրայ: Ապա ո՞ր իրանահայ երաժշտասէր մանուկը չի երգել նրա յօրինած երգերից «Օր-օր»-ը, «Ծիծեռնակին», «Լորիկին», «Անբախտ փիսօն», «Ծիտիկ-միտիկ», «Ծափիկ հարսանիքը», «Կաշաղակ», «Քիրք» («Աստ տեսնեմ»), «Երկու արցունք», «Պճինկօ» («Աղւէսն եկաւ»), «Ոսկէ ձիկը», «Պու-պու», «Երկու որբեր», «Ուլիկ», «Արեգակը դուրս է եկել» և շատ ուրիշներ, որոնք կառուցւած են մանկական երաժշտութեան ուրոյն առանձնայատկութիւններով:

Բայց Պալանդէրեանի ստեղծագործութիւններն ուսումնասիրելիս տեսնում էք մի այլ աշխարհ: Դա գիւղն է, գիւղական ժողովրդի կեանքը, նրա յոյզերն ու տրամադրութիւնները, խոհերն ու մտորումները, որոնց երաժշտագէտն արտայայտել է մէկը միւսից գրաւիչ երաժշտական երգերով: Լսէք միայն նրա ներդաշնակած «Քիւղական եսկիզներ»-ը և հովերգական այդ պարզ, խաղաղ ու գեղեցիկ աշխարհում պիտի ծանօթանաք գիւղացիների խօսակցութեան, նրանց մտորումների, ուրախութեան, վրդտերի ու կենցաղի հետ: Ապա լսել էք նրա կերտած գիւղական սիրաշիւ երգերը—«Էսօր եարս շատ է խաղցեր»,

«Ախ, մարալը աղբիւրի մօտ» (Աւ. Իսահակեանի), «Մեր տունն եկող ձիաւոր» (Վ. Միրաքեանի) կամ «Սե ձին նըստող թևաւոր» և կամ «Պապակ սրտիս», «Սե աչերով», «Պուճուր աղջիկ» և այլ գողտրիկ երգեր, որոնք կրում են հայ ժողովրդական ու յատկապէս Ակնայ ժողովրդական երգերի էական յատկանիշները, ոգին, շեշտը, ուրիշը և, որ կարեւորն է, աչքի են ընկնում իրենց պարզութեամբ, զգացմունքի անկեղծութեամբ և վարակում լսողին հոգեպարար լիրիզմով և յուզիչ ջերմութեամբ:

Ուրոյն տեղ են դրաւում նաև նրա ձայնագրած դուետները, ֆառանազները, մանաւանդ աշուղական մեներգները — «Եւր, աչերդ» (Աւ. Իսահակեանի), «Պանցնեն օրերն, Անուշ ջան» (Յովհ. Թումանեանի), «Քէ կայ մի սիրտ», «Մեղրից անուշ», «Զոյգ արևներ», «Եւրս վարսով» (Եղ. Հայպետի), «Ամէն անգամ քեզ տեսնելիս», որոնց մէջ նա հանդէս է գալիս իր երաժշտական ինքնուրայն դիմագծով և ստեղծագործական հարուստ տեւալներով:

Առանձնապէս յաջող են նրա գործիքային տրիօ (եռաձայն), ջութակի և թաւ ջութակի համար ձայնագրած եղանակները, վաշտերը (եւրոպական պարի եղանակ), սեռեմադաները (գիշերային երգ, լարաւոր գործիքի ձայնակցութեամբ), ինչպէս նաև ջութակի համար ներդաշնակած մեներգները, Թեհրանի եսկիզները և մանաւանդ առեւեյեան պարերգները, որոնք օժտւած են արեւելքի ժողովրդական պարերի առանձնայատուկ գծերով: Դրանցից անպայման ուշագրաւ են հայկական ժողովրդական մեներգները և խմբական պարերգները, որոնց մէջ զլխաւորապէս պատկերանում է Ակնայ հարաւանի՝ իր նազանի, քնքուշ պարերով և երաժշտութեամբ: Նրա ձայնագրած գեղեցիկ պարերգներից յիշատակենք՝ «Դալիւ-լիւ», «Սէյրան եմ», «Գիւլիգար», «Վարդ եմ քաղեր-օյնար», «Արևների արևն»:

ես», «Դինօգինօ», «Դարինինամ», որոնք իրենց նրբութեամբ, ներդաշնակ կառուցւածքով և գունազեղութեամբ ուրախ ու բարձր տրամագրութիւն են ստեղծում լսողի մէջ, Առանձնապէս յիշենք «Շահնուշ»-ը, արևելեան բնորոշ, տիպիկ այն պարը, որ գծւած է այնքան նուրբ երանգներով և իր գեղարւեստական ամբողջութեամբ այնքան հարազատ է արևելքի ժողովրդի պարարւեստին։

Էլ չենք արձանագրում երաժշտագէտի ձայնագրած էլեգիաներն ու էսկիզները և հայրենասիրական երգերը, որոնցից ուշագրաւ են 1) *Սեմերգները*—«Ես իմ անուշ Հայաստանի» (Եղիշէ Չարենցի), «Հազար ասեն», «Ամէն գիշեր մեր պարտիզում» (Ա. Իսահակեանի), «Արի, բլբուլ ջան» և 2) *խմբերգները*—«Արի, բլբուլ» (Շուշանիկ Գուրդինեանի), «Կաքաւի ողբը» և «Մեր ճամբէն» (Յովհ. Թումանեանի), Չենք յիշատակում նաև դարիքական, մանաւանդ աշխատանքի երգերը—«Քաշի եզը» (Խմբերգ), «Հօրովել» (Խմբերգ), «Իրիկնահովին», «Քրտինքի երգը» (Եղ. Հայպետի), «Հաց եմ թխեր», որոնք արւեստագէտի գեղեցիկ ստեղծագործութիւնների շարքին են պատկանում։ Այնտեղ տեսնում էք հայ գիւղացու մաքուր, անկեղծ զգացումները, նրա պաշտամունքը դէպի իր աշխատանքը և սիրելի լծկանք։

Երգահանի երգերի մէջ ուշագրաւ են նաև յեղափոխական մօտիւնները—«Կարմիր գարուն», «Դէհ, լսիր», «Էին ճնշւածներ», «Յաղթանակ» և այլ երգեր, որոնք վրկայում են նրա առանձին սէրն ու համակրանքը դէպի աշխատաւոր դասը։

Այժմ այստեղ առաջ բերենք Գալանդերեանի 1911—1942 թ. ընթացքում յօրինած երգերի ցուցակը, որ երաժշտագէտն ուղարկել էր մեզ իր մահից մի ամիս առաջ։

| Տեսակը                                                                                                                                      | Հայերէն | Գարսկ. | Գումարը |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------|--------|---------|
| Երգ — Aria                                                                                                                                  | 57      | —      | 57      |
| Սիրերգ — Romance                                                                                                                            | 204     | 1      | 205     |
| Զուգերգ (երկձայն)                                                                                                                           | 12      | —      | 12      |
| Խմբերգներ (քառաձայն)                                                                                                                        | 139     | 8      | 147     |
| Ժողովրդական մեներգներ                                                                                                                       | 47      | —      | 47      |
| Աշուղական երգեր                                                                                                                             | 21      | —      | 21      |
| Մանկական երգեր                                                                                                                              | 28      | 18     | 46      |
| Աշակերտական օպերաներ                                                                                                                        | 8       | —      | 8       |
| Օպերաներ                                                                                                                                    | 3       | —      | 3       |
| Զուլթակի Quatore-ներ, Trio-ներ,<br>Reverie-ներ, Serenade-ներ Valse-<br>եր, արևելեան պարեր                                                   | 204     | —      | 204     |
| Էսկիզներ                                                                                                                                    | 70      | —      | 70      |
| Ժողովրդական բանասիրական թիւերից<br>կամ երաժշտագէտի ինքնուրոյն<br>ստեղծագործութիւնից սիրերգ-<br>ներ, խմբերգներ, մեներգներ,<br>մանկական երգեր | 122     | —      | 122     |
|                                                                                                                                             | 915     | —      | 942     |

Ահա այս է Գալանդէրեանի ստեղծագործութիւն-  
ների պատկերը, որ նա ձայնագրել է իր 30-ամեայ գոր-  
ծունէութեան ընթացքում: Դա, անկասկած, երաժշտական  
մի ամբողջ աշխարհ է, ուր հայ ժողովուրդն է խօսում  
իր վշտերով ու ցաւերով, իր յոյզերով ու յոյսերով, իր  
խինգ ու ժպիտով, ուր հայ գեղջուկն է պատկերանում  
իր մաքուր զգացումներով, իր հոգեկան ապրումներով և  
իր մեծ սրտով, ուր անհատն է նկարում իր սիրոյ, կա-  
րօտի ու վշտի երգերով, ուր Արևելքն է գծագրում իր  
գունեղ հեշիւններով, ոճով ու երանգներով և ուր, վեր-  
ջապէս, երեխաների քաղցր ձայնն է հնչում և նրանց ան-

մեղ, անուշ ու պայծառ աչքերի ժպիտն է փայլում: Այդ բազմերանգ երգերով Գալանդէրեանը զարկ է տւել հայ երաժշտութեան զարգացմանը: Դա ինքնին կուլտուրական մի վեհ աշխատանք է, որն արժանի է ջերմ գնահատութեան\*):

#### IV

### «ԼԱԼԻԱՐԻ ՈՐՍԸ» ՕՊԵՐԱՆ

Քնարական-սիրային երգերի ձայնագրութիւնները Գալանդէրեանին չեն գոհացնում և նա որոշում է ներդաշնակել երաժշտական մի մեծ կտաւ: Այդ իգէան այնուհետեւ նրան հանգիստ չի տալիս և նա ընկնում է որոնումների մէջ: 1926 թւին վճռում է յօրինել հայկական մի օպերա: Երկար վարանումներից յետոյ՝ վերջնականապէս կանգ է առնում բանաստեղծ Վահան Միրաքեանի «Լալաւարի որսը» գեղարւեստական պօէմայի վրայ: Այդ յանդուգն ծրագրի մասին յայտնում է իրեն ծանօթ արւեստագէտներին, որոնք հեգնանքով են լսում նրա այդ միտքը և գտնում են անիրագործելի, բայց նա ուշադրութիւն չի դարձնում և անցնում է ստեղծագործական աշխատանքի: Գրասէր Յ. Մովսիսեանը կազմում է լիբրետտօն, որի վրայ նա աշխատում է մի ամբողջ տարի և լուրջ, յամառ, անխոնջ ու հետևողական աշխատանքով պատրաստում օպերան՝ չորս գործողութեամբ և երկու պատկերով: Սակայն շուտով կանգ է առնում զժաւրութիւնների առջև,

\*) Գալանդէրեանի երաժշտական անտիպ աշխատութիւնները գտնուում են իր մեծ դուստր՝ տիկ. Սեդայի մօտ, իսկ 1946 թւի Սեպտեմբերին, երբ Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարին մասնակցելու համար հրաւիրւեցինք Երևան, մեղ հետ տարինք երաժշտագէտի 8 կտոր երգերը՝ մեներգ, դուէտ և խմբերգ, որոնց յանձնեցինք Սիսօ Պետրոսեանին, Սեդայի քննորդուն, խնդրելով, որ այդ անտիպ էջերն Երևանի Արեւստի Գործերի Վարչութեան միջոցով տպագրել տայ: Ար. Եր.

որովհետև յուզում են նրան մի շարք հարցեր—սուր բեմադրել, ինչպէս պատրաստել դէկորները և նիւթական ինչ միջոցներով կազմել նւագախումբը, նման հանգամանքներում նա որոշում է բեմադրել օպերայի որոշ տեսարաններ:

1928 թվականին, Թէհրանի «Հայկազեան» դպրոցում, ԹՀԵՆԱ-ի նախաձեռնութեամբ, առաջին անգամ բեմադրւում է «Լալարի որսը» օպերայի ուվերտիւրան և երկրորդ գործողութեան առաջին պատկերը: Այդ երեկոյ Կարօի պատասխանատու դերում փայլում է երգիչ Արա Տէր-Յովհաննիսեանը, իսկ Արշարդի՝ օր. Լորիկ Մովսիսեանը:

Սակայն, օպերան իր ամբողջութեամբ բեմադրելու միտքը Գալանդէբեանին անվերջ յուզում է: Այս անգամ նրան օգնութեան է հասնում ԹՀԵՆԱ Միութեան երգեցիկ քառաձայն խումբը և իր վրայ վերցնում համերգի ոչ միայն նախաձեռնութիւնը, նախապատրաստական աշխատանքները, այլև ամբողջ պատասխանատուութիւնը: Այդ հանգամանքը նոր եռանդ և նոր ոգի է ներշնչում արւեստագէտին և նա անցնում է լուրջ աշխատանքի: Ամբողջ երեք ամիս տեղի են ունենում ներկայացման փորձերը, իսկ 1928 թ. Ապրիլին Թէհրանի կենտրոնական փողոցների պատիւրը զարդարում են «Լալարի որս»-ի ներկայացման յայտարարութիւնները: Եւ ահա նոյն ամսի 26-ին, Ուրբաթ օրը, երեկոյեան ժամը 9-ին, «Հայկազեան» դրպրոցի սրահում, առաջին անգամ, ամբողջութեամբ բեմադրւում է օպերան, որին առանձին փայլ է տալիս քառասուն հոգուց բաղկացած երգեցիկ քառաձայն խումբը: Դա երաժշտական մի ուշագրաւ երևոյթ է, որն անպայման ունի իր էջը Թէհրանի հայ հասարակական կեանքի գեղարւեստական պատմութեան մէջ: Այդ երեկոյ գլխաւոր հերոսներից Աւագ յոսկանի գերը կենդանի երանգներով պատկերում է Վ. Թադէոսեանը, Կարօի դերն անքան լա-

Ղողութեամբ խաղում է Արա Տէր-Յովհաննիսեանը, իսկ Ալ-վարդի տիպարը կերտում է օր. Սիրանոյշ Գէորգեանը։ Առ-հասարակ, դերակատարներն իրենց հոգեբանական ապրում-ներով կարողանում են հարազատութեամբ պատկերել բա-նաստեղծութեան բովանդակութիւնը։ Մի տարի անց, 1930 թ. Դեկտ. 30-ին, Զրադաշտականների սրահում ամբողջու-թեամբ նորից բեմադրւում է օպերան, որի մասին պարս-կերէն «Էթէրապ» թերթում լոյս է տեսնում ներկայաց-ման երաժշտական արժէքն արձանագրող մի յօդւած։

Մի հանգամանք պարզ է, որ «Լալլարի որսը» օ-պերան Գալանդէրեանի ստեղծագործութիւնների մէջ ու-րոյն տեղ է գրաւում և կազմում նրա կերտած երաժըշ-տական մի գեղեցիկ արձանը։

## V

### ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Գալանդէրեանի գեղարւեստական զարգացման և մանաւանդ նրա կրած ազդեցութիւնների աղբիւրն աւելի պայծառ և պատմական լոյսով պարզաբանելու համար գը-ծենք այն միջավայրի պատկերը, որի ծնունդն է նա։

Ակն—ահա Փոքր-Հայքի կենտրոնում բազմած այն վայրը, ուր սնւել և մեծացել է երաժշտագէտը։ 960 տար-ւայ պատմական անցեալ ունի այդ հին քաղաքը, որ իր ծառադարձ գեղեցիկ այգիներով ու պարտէզներով, առատ ու զուլալ ջրերով և իր աջ ափին հոսող Եփրատ գետով ներկայացնում է բանաստեղծական մի չքնաղ տեսարան։ Պատերազմից առաջ այդտեղ ապրում էին մօտ 6000 շունչ հայեր, որոնց գաղթի պատմութեան փաստաթղթերն ա-մենից առաջ տանում են ձեզ ԺԱ դարու էջերը։ Դա թա-թարական արշաւանքների ժամանակաշրջանն է, երբ Անիի հարուստ և փարթամ հայերը գալիս են Եփրատի ափերը, դէպի Ակն։ Կան այլ աղբիւրներ, որոնք վկայում են, որ

հայոց Սեփեֆերիմ Արծրունի թագաւորը, իրեն սպառնացող վտանգից ազատելու համար, Վասպուրականը յանձնում է Վասիլ կայսեր և իր արքունիքով ու զօրքով գաղթում դէպի Սեբաստիա, Փոքր-Հայք։ Այդ շարժման մասնակցում են նաև երկրի ժողովրդից մօտ չորս հարիւր հազար հայեր։ Դրանցից իշխանական մի քանի տոհմեր հաստատուում են Ակն քաղաքի Ապուչեխ գիւղում։

Դաղթական ժողովուրդը նոր հողի վրայ զբաղւում է իր ուրոյն տնտեսութեամբ. առևտուրը, արհեստները և մանաւանդ պարտիզամշակութիւնը\*) կազմում են նրա աշխատանքի հիմնական աղբիւրները։ Ուշագրաւ է և այն, որ 19-րդ դարում Կ. Պօլսում փայլում են գլխաւորապէս ակնցի ամիրաները կամ սեղանաւորները, իսկ դեռ 70 և 80-ական թւականներին Ակնի հայերը հիմնում են իրենց «ս. Աստուածածին», «ս. Գէորգ», եկեղեցիները, ընկերութիւնները, գրադարանները և «Ներսիսեան» վարժարանը։

Սակայն, մի հանգամանք էլ աւելի բարձրացնում է Ակնայ ժողովրդի հմայքը։ Դա նրա քանաւնեղծակա՞ն խոշոր ձիրքն է։ Ծառազարդ այգիներում ու պարտէզներում, գետեզրում և ջրառատ սարերի լանջերում ապրող ժողովրդի սրտի ու հոգու հետ խօսում են հմայիչ բնութեան նկարչական տեսարանները։ Եւ նա ժամանակի ընթացքում հիւսում է երգեր, որոնք իրենց պարզութեամբ, զգացմունքի խորութեամբ և գունեղ երանգներով գեղարւեստական ուրոյն արժէք են ներկայացնում և առանձնայատուկ տեղ զբաւում հայ ժողովրդական բանահիւսութեան պատմութեան մէջ։ Այդ երգերից ուշագրաւ են սիրային, պարի, հարսանեկան և մանաւանդ պանդխտութեան ոտանաւորներն ու անտունիները, որոնք հարազատ ար-

\* Ակնում ամէն տուն ունէր իր ծառաստանը, որի զարդն էր թթենին։ ձերմակ, պղտիկ և շաքարահամ թութից հայ կանայք պատրաստում էին պաստեղ, ռոճիկ և այլ անուշեղէններ։ Ար. Եր

տայայտութիւնն են ժողովրդի զգացումների և հոգեկան ապրումների:

Բայց Ակնի ժողովրդի ստեղծագործութեան գլխաւոր շարժառիթ հանդիսանում են ժամանակի տնտեսական և քաղաքական ծանր հանգամանքները, որոնք ստիպում են, յատկապէս երիտասարդներին, թողնել իրենց սիրելիներին ու հարազատներին և գնալ օտար հորիզոններ: Անցնում են տարիներ, բայց զարիւրներից շատերը չեն վերադառնում: Եւ ահա զարիւր ելքօր կարօտը քաշող ակնցի քոյրն իր հոգեկան վիշտն ու թախիծն արտայայտում է մի պարզ, բայց յուզիչ բանաստեղծութեամբ, պատկերելով իր զգացումներն այսպիսի լիրիզմով.

«Բիւլբիւլը կու կանչէ,

Ասօր գարուն է.

Ախպար մ'ալ ունիմ,

Իսմէն հեռու է.

Խալէմս կու թաթխիմ,

Ծարիկն արիւն է,

Քանի կու գրիմ,

Սրտիկս կարունէ»:

Ահա և զարիւր ամուսնու սիրոյ կարօտով տանջւող ջահէլ կնոջ սրտի խոր հառաչանքը.

«Դէ արի, շուտ արի, տուն արի, եսր,

Ծտիկից թե առ ու թէզ արի, եսր»:

Կամ՝

«Դու էն ծովի խալը կենաս,

Ինձ քեզնից հասրաթ պահես.

Թե երովս կամուրջ կապեմ,

Թունես անցնես ու ինձ հասնես»:

Հօէք նաև ակնցի գեղեցիկ հարսի գովքը, որի մէջ քնարական շունչ կայ.

«Այ իմ, այ աննման աղւոր,  
Աղւոր, քեզ իմ մարն է բերեր.  
Ան թուխ աչեր մարն է բերեր,  
Մարն է բերեր մեզի համար,  
Մենք ենք եկեր քեզի համար:

Այ իմ աղւոր աննման,  
Աննմանիդ ով նման.  
Այ իմ աղւոր աննման,  
Աննմանիդ դու նման»:

Կամ՝

«Քալէ, հարսնո՛ւկ, քալէ, հարսնո՛ւկ,  
Վրայ խալուն քալէ, հարսնո՛ւկ.  
Քալէ ու մանտրիկ քալէ,  
Ալուկ փէշերդ վեր ծալլէ»:

Նոյնքան գեղեցիկ են օրօրները, ուր տեսնում էք  
մայրական նւիրումը, գուրգուրանքն ու անհուն սիրոյ  
զգացմունքը: Առաջ բերենք մի նմուշ.

«Դուն ապրիս հօրով, մօրով,  
Հաց նստիս ջուխտակ աղբարով.  
Ապրիս դուն հօրով, մօրով,  
Ու լցւի սրտիկդ արևով:  
Աղւոր ես ծոցուդ 'ի վեր,  
Երթամ ո՞վ բերիմ խաղընկեր.  
Երթամ լուսնկան բերիմ,  
Լուսուն աստղը՝ խաղընկեր:  
Կարմիր վարդ ու լան տերև,  
Բացւեր է մեր տան 'ի վերև.  
Քանի կայ պախճան տերև,  
Այնքան կուզիմ քեզ արև»:

Ահա Ակնայ ժողովրդական երաժշտութեան շեշտը,  
երանգներն ու գունաւորումները լսում էք Գալանդէրեանի  
ստեղծագործութիւնների, մանաւանդ նրա զուտ հայկական

երգերի մէջ: Այդ երեոյթը, անկասկած, պիտի բացատրել նր-  
բանով, որ երաժշտագէտի մանկութեան և պատանեկութեան  
շրջանն անցել է Ակնում, Ակնի ժողովրդական երգերի ու  
երաժշտութեան ոլորտում: Նա խորապէս տպաւորւել է  
այդ ժողովրդի առանձնապէս թախծոս երգերից և ժողո-  
վրդական այն եղանակներից, որոնք գունաւորւած են  
հայկական ոճով:

— Ծննդավայրի հողն ու ջուրն է խօսում իմ մէջ,—  
գրում է նա իր կենսագրութեան մէջ:

Թերևս դրանով էլ պիտի լուսաբանել, որ նրա երա-  
ժշտական արտադրութիւնները լսելիս ձեր սրտի ու հոգու  
հետ խօսում են Ակնայ ժողովրդական երգերը, որոնք ու-  
նեն մի բնորոշ գիծ—խոր թախիծ և մելամաղձոտ շեշտ:  
Այդ յատկանիշները, մանաւանդ խաղերի շեշտը, լսում էք  
արւեստագէտի երաժշտութեան մէջ: Աւելին: Ակնայ եր-  
գերին ծանօթ մէկը Գալանդէրեանի արւեստը լսելիս ընդ-  
գծում է, թէ այդ երաժշտութեան հեղինակն Ակնի ժո-  
ղովրդի զաւակն է:

Նւագեցէք երաժշտի ձայնագրած հարսանեկան եր-  
գերից «Բարի լուսուն, աղւոր», «Այ իմ աղւոր աննման»,  
«Աղւոր, քեզ ո՞ր մարն է բերեր», «Ժամէն կուգայ», «Քա-  
լէ, հարսնո՞ւկ, քալէ», մանաւանդ ժողովրդական արագ  
պարերգը—«Մարալօ, Մարալ, հոփ» և պիտի զգաք Ակնայ  
ժողովրդի երաժշտութեան տարբեր հնչիւնները, երանգ-  
ներն ու գունաւորումները: Լսէք և նրա քնարական մօտիւ-  
ները—«Բիւլբիւլը կու կանչէ, գարուն է, գարուն», «Օ-  
րօր կանչեմ, իմանաս», «Արեւների արևն ես», «Ես բլբուլ  
եմ, վարդ կուգեմ», «Լուսնակը շողէ շող» և այլն, որոնց  
մէջ շատ պարզ հնչում են Ակնայ ժողովրդական երգերի  
շեշտը, ռիթմը և գոյները: Այդ երգերի խոր ազդեցութեան  
դրոշմը կրում են նաև նրա հովերգական երաժշտութեան  
քնարական մօտիւնները—«Սև աչքերով սիրուն տղայ»,

«Պապակ սրտիս, փափագ սրտիս» և այլ շատ երգեր: Հէնց այդ երևոյթներով էլ պիտի բացատրել Պալանդէրեանի երաժշտութեան ժողովրդական բնոյթը:

Սակայն, նրա երաժշտական ազդեցութիւնների հարցը լուսաբանելիս անպայման պիտի ընդգծել էջմիածինը, ուր անմահ Կովիսասի երգեցիկ խմբի ազդեցութիւնը ներշնչել է նրան սէր և պաշտամունք դէպի երգն ու խմբական երգեցողութիւնը:

— Ճեմարանը,— գրում է Պալանդէրեանը մեզ ուղարկած նամակում,— իմ մէջ եղած թագուն ոյժը՝ դէպի երգն ու երաժշտութիւնն ունեցած հակումներս զարթեցրել է:

Յիշատակենք նաև Վառնայի զինւորական սիմֆոնիկ երաժշտախումբը և հայկական «Գողթան» երգեցիկ խումբը, որոնք նրա հոգում դէպի երաժշտութիւնն ունեցած սէրն աւելի են քոցավառում: Նշենք և Շումէնը, որ նրա երաժշտական հետաքրքրութիւնն էլ աւելի է խորացնում: Նոյնպէս արձանագրենք Ծեբելդան, որ առաջին անգամ հրահրում է նրան երաժշտական ստեղծագործական աշխատանքի, իսկ Թէհրանն աւելի ուժեղ կերպով դրսևորում է նրա մէջ թագնւած արւեստի հարուստ տւեալները և նրան առաջնորդում մասնագիտական ուղիով: Վերջապէս, ընդգծենք, որ Պալանդէրեանի երաժշտական ձիրքը զարգանում է և խորանում նաև եւրոպական արւեստագէտների բազմակողմանի ուսումնասիրութեան փոփոխութեան մի շարք երգերի վրայ նկատելի են գլխաւորապէս գերմանական շօլայի, առանձնապէս Մօցարտի, Բեթհովէնի և մանաւանդ Շումանի ազդեցութիւնը: Նա սիրում է և վերագնահատում հրքան Բեթհովէնի դրամատիզմը, նոյնքան էլ Շումանի թախիծը:

Ինչ են ասում ընդգծւած երևոյթները: Այն, որ Պալանդէրեանը, ճիշտ է, չի անցել որևէ երաժշտանոցի բովից, բայց նա մշակւել և կերտւել է կեանքի դպրոցում:



Եւ դա շնորհիւ իր աննկուն կամքի, մեղաւջան աշխատասիրութեան և երաժշտական արւեստի հանդէպ ունեցած անսահման սիրոյ ու խանդավառութեան:

## VI

### ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԻՆՍՏԸ

Անժառանգի է, որ ինչպէս ամէն մի գրական, այնպէս էլ երաժշտական ստեղծագործութեան արժէքը բնորոշուում է միայն իր գեղարւեստական-հասարակական կառուցածքով: Այդպէս են անմահ Մօցարտի, Վագների, Բեթհովենի, Ֆրանց Շուբերտի, Շօպէնի, Բիմսկի-Կորսակովի, Չայկովսկու և այլ տաղանդաւոր կոմպոզիտորների երաժշտական կտանները, որոնք ոչ թէ միայն Ֆիզիքական ձայներ են, այլ հոգեկան խոր ապրումներ, կերտած արւեստագէտի կարող շնչով, որոնց լսելիս դուք խորապէս ներշնչուում էք և համակուում ջերմ գգացումներով:

Փալանդերեանն աշխատել է հանճարեղ երաժշտագէտների արւեստի էական յատկանիշները բազմակողմանի գծերով ուսումնասիրել՝ արտայայտելու համար իր երգերում:

Նշենք մի այլ երևոյթ: Աւստրիացի յայտնի երաժշտագէտ Ֆրանց Շուբերտը դիտում է, թէ երաժշտութիւնը պէտք է արտայայտէ բանաստեղծութեան տրամադրութիւնը: Սա մի էական պայման է, որին պիտի ձգտի ամէն մի ստեղծագործող-երաժիշտ: Ահա այդ հիմնական յատկանիշը նկատելի է Փալանդերեանի երգերում: Նրա լաւագոյն ստեղծագործութիւններում տեսնում էք բանաստեղծութեան հոգեբանական իմաստի և երաժշտութեան բովանդակութեան սերտ ներդաշնակութիւն: Այդ երևոյթի վրայ աւելացրէք նրա արւեստում իշխող շարահիւստումների սահուն հետևողականութեան և միաժամանակ տրամադրութեան ճշգրիտ վերարտադրութիւնը, գծեր, որոնք արւեստի մէջ նշանակալից դեր են կատարում: Բայց կայ աւելին:

Ամէն մի երաժշտագէտի ստեղծագործական շունչն էլ աւելի է շեշտուում, երբ նա կարողանում է իր երգերին տալ ոչ միայն զոյներ, ոչ միայն հակադրութիւններ, այլև հոգեկան յոյգերի հարազատ արտայայտութիւններ, երբ նա իր ինքնուրոյնութիւնն ու անհատականութիւնն ամփոփում է երաժշտական արտայայտիչ ձևերի մէջ, երբ պատկերացընում է տարբեր երանգներով ու ապրումներով: Կայ եւ ամենաէականը: Որևէ երաժշտութիւն դառնում է գեղարւեստական, երբ արւեստագէտը կերտում է զգացմունքով: Զպէտք է մոռանալ, սակայն, որ զգացմունքը դեռ գեղարւեստ չէ: Այն ժամանակ միայն երաժշտութեան մէջ արտայայտւած զգացմունքը խօսում է ձեր հոգու հետ և զարթեցնում ձեր սրտում վեհ, ազնիւ զգացումներ, երբ երաժիշտը խորապէս, անկեղծօրէն ապրում է ու ներշնչւում իր նիւթի էութեամբ, երբ սուգորում է նրա մէջ արտայայտւած մտքերով և կերտում անսահման անկեղծութեամբ, խորութեամբ ու լայն ծաւալով, երևոյթներ, որոնք նկատելի են Գալանդէրեանի երաժշտական լաւագոյն երգերում:

Նկատենք և այն, որ նրա ստեղծագործութիւններն իրենց զգացմունքով ցուցահանում են երկու հակադիր և էական գծեր—առաջին՝ անսահման կարօտ, անկեղծ, ցաւագին խորումներ, վիրաւոր հիասթափումներ, փշուած յոյսեր, խորտակւած իղէալներ, միացող վշտեր, հոգեկան լուռ հեկեկանքներ, ինչպէս և քաղցր ու երջանիկ օրերի անդառնալի կորուստ: Երկրորդ՝ ուրախ, զւարթ, աշխոյժ, ժպտուն և կայտառ թոփքներ: Սակայն, շեշտենք, որ Փալանդէրեանի երաժշտութիւնը համակւած է աւելի տրտում լիրիզմով, տոգորւած է աւելի մեղամաղձիկ բանաստեղծական տրամադրութեամբ: Նա ձայնագրել է գլխաւորապէս կեանքի ցաւոտ, վշտագին և յուզումնալից էջերը: Ահա թէ ինչո՞ւ մի անանց կարօտ, մի վշտաբեկ մրմունջ և

անուրջ, մի ծանր ու տխուր անջատում կայ նրա երգերում: Առհասարակ, նրա երաժշտութեան մէջ հնչում են աւելի թախծալից խոհեր, աւելի վշտոտ յուշեր և անորոշ յոյզեր: Զգացմունքի այդ տրամադրութիւնները, որոնք կազմում են նրա արւեստի յատկանշական գծերը, յիշեցնում են ձեզ տաղանդաւոր կոմպոզիտոր՝ Չոպանի թախիծը: Դա միաժամանակ այն թախիծն է, որ իշխում է դուխաւորապէս հայ ժողովրդի և մասնաւորապէս Ակնայ ժողովրդական երաժշտութեան մէջ:

Մի լուսաբանութիւն ևս՝ Ուլքեր ծանօթ են երաժշտական արւեստի էութեանը, նրանք միայն շատ լաւ գիտեն, թէ այն երաժշտութիւնը, որի գծագրութիւնները կապւած չեն ժողովրդի հոգու լարերի հետ, այն երաժշտութիւնը, որ իբրև հայելի իր մէջ չի արտացոլում ժողովրդի կամ անհատի հարազատ կեանքը, նման մի արւեստ երբէք չի կարող ապրել: Գալանդէրեանի երաժշտութեան թէ ժողովրդական և թէ լիբիքական կառուցւածքն ինքնին բնորոշում են նրա արւեստի հասարակական արժէքը:

Այդ հիմնական յատկութիւնների վրայ աւելացնենք նրա արւեստի մի այլ բնորոշ գիծը: Դա պատկերաւորութիւնն է, մի յատկանիշ, որը շատ կարևոր դեր է կատարում երաժշտութեան կառուցման խնդրում: Գալանդէրեանը թէ իր ներքին հոգեկան աշխարհը, թէ անհատական լիբիքմը և թէ ժողովրդի խոհերն ու իրոքները, յոյզերն ու տրամադրութիւնները կարողացել է արտայայտել նկարչական հնչիւններով, մի երևոյթ, որն առանձին փայլ է տալիս նրա երգերին:

Սակայն, նրա երաժշտութիւնն օժտւած է արւեստի մի այլ էական գծով: Դա նրա օպերաների մէջ արտայայտւած դրամատիզմն է: Զպէտք է մոռանալ, որ դրամատիքական պայքարի արտայայտութիւնն երաժշտական արւեստում ամենադժուար գծագրութիւնն է: Դա հոգեբա-

նական այն կոիւն է, որ պօէմայի հերոսները մղում են իրենց ձգտած նպատակին տանող ճանապարհի վրայ հանդիպած խոչընդոտների դէմ: Դա երաժշտութեան դրամատիզմն է, որ պէտք է ընթանայ բնական, պարզ, աստիճանական զարգացումով և ներդաշնակ միութեամբ ձուլւի պօէմայի հիմնական գաղափարի հետ: Այդպէս է կառուցւած Դալանդերեանի «Լաշարի ուսը» օպերան: Վերջապէս, նշենք նրա երգերի մէջ աչքի ընկնող արեւելեան ոճը: Արևելցու հոգեբանութիւնը, նրա տարբեր տրամադրութիւնների արտայայտութիւնները նա կարողացել է ուրոյն երանգներով ու հնչիւններով ցոլացնել իր երգերի մէջ:

Թերևս երգահանի արւեստի այդ էական յատկանշներով էլ պիտի բացատրել, որ նրա մի շարք երգերը լսելիս ապրում էք երաժշտական մի գեղեցիկ աշխարհում: Զգում էք, որ նրա կերտած հնչիւնների, երանգների ու նկարների ոլորտում փոխւում է ձեր հոգին, սիրտը, փոխւում է ձեր միտքը և դուք զգում էք գեղարւեստական խոր հաճոյք:

## VII

### ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԳԱԼԱՆ-ԴԵՐԵԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Իր 30-ամեայ գործունէութեան ընթացքում Գալանդերեանն իրագործել է նաև մի վեհ ծրագիր: Երաժշտական ստեղծագործութեան նիւթ է դարձրել հայ բանաստեղծական գրականութեան լաւագոյն էջերը: Այդ գծով էլ նա նպաստել է մեր գեղարւեստական պօէզիան ժողովրդականացնելու վեհ աշխատանքին: Ուշագրաւ է և այն, որ նա երաժշտական հնչիւնների վերածել է թէ՛ արևելահայ, թէ՛ արևմտահայ և թէ՛ գաղութահայ հին ու նոր հարիւր հինգ բանաստեղծների յօրինած 519 ոտանաւորները: Այդ երաժշտութեան մէջ դուք ամենից շատ տեսնում էք տա-

դանդաւոր քնարերգակ՝ Աւետիս Իսահակեանի երգերը— «Ամէն գիշեր մեր պարտիզում», «Էս օր եարս», «Ա՛խ, մարալը», «Եմբ, աչերդ», «Ես երգիչ եմ», «Գիշերն եկաւ», «Կուգեմ լինեմ» («Մերուն աղջիկ»), «Շուշան աղջիկ», «Արագին» («Մեր սարերէն»), «Թափեցին տերեւերը», «Է՛յ, ջան հայրենիք», «Քնքոյշ սքող՝ ես սիրեցի», «Երնէկ ես էլ ալ թիթեռներ» և այլն: Այնուհետև նկարուած է յայտնի բանաստեղծ՝ Վահան Տերեանի պայծառ դիմագիծը, լսուած էք նրա քնարական սքանչելի սիրերգները—«Ես սիրում եմ քո մեղաւոր աչերը խոր», «Մոռանալ, մոռանալ», «Ո՛չ տրտունջ», «Այնպէս նազիկ», «Իջաւ նորից աշուն» «Արդեօք ուր ես», «Աշուն է, անձրև», «Կարուսէլ», «Աքծաթաշող առուն», «Քնքոյշ երագով», «Ու անհոգ նայեցի», «Արդեօք յիշում ես» և այլ տխուր, մելամաղձոտ ոտանաւորներ, որոնք նոր երանգաւորուած են ստացել արեւստագէտի երգերում:

Նրա երաժշտութեան մէջ հնչում են նաև ժողովրդական մեծ բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանյանի լիրիքական մօտիւններից—«Իմ սէրը», «Է՛յ, աստղեր, աստղեր», «Կաքաւի ողբը», «Կանցնեն օրերն, Անուշ ջան», «Փարանա» (օպերա) և այլն: Զայնագրել է նաև Կովկասահայ առաջին երգչուհի՝ Ղուշաճիկ Կուրդիանյանի երգերից—«Արի, բլբուլ», «Հէյ, մարալ աղջիկ» և ուրիշներ: Ահա և Եղիշէ Զարեանի քնարից—«Ես իմ անուշ Հայաստանի», Յատուկ տեղ են զբաւում նաև իրանահայ նուրբ պօէտ՝ Մարգար Զարաբէգեանի (Դև) երգերը—«Լոյսերը մարան», «Խենթ տղայ», «Վարանում», «Նորից ամառ» ևլն:

Գալանդէրեանի երաժշտական արեւստում ունեն իրենց յատուկ էջերը նաև Միսակ Մեծարենցի, Ռուբէն Զարդարեանի, Ռուբէն Սևակի, Վահան Թէքեանի, Դերենիկ Պեմիրճեանի, Զաքարոս Աղայեանի (մանկական), Արմենուհի Տիգրանեանի և այլ գրողների գեղարեւստական

արժէք ներկայացնող ուսանաւորները Ահա թւական տեսակէտից մի պատկեր, որը 1940 թւին երաժշտագէտը մեզ է ուզարկել.

|                                   |    |     |
|-----------------------------------|----|-----|
| Աւետիք Իսահակեանից . . . . .      | 49 | երգ |
| Վահան Տէրեանից . . . . .          | 40 | »   |
| Մարտիրոսից . . . . .              | 27 | »   |
| Եղիա Հայպետից . . . . .           | 20 | »   |
| Յովհաննէս Թումանեանից . . . . .   | 15 | »   |
| Հայկ Օհանեանից . . . . .          | 13 | »   |
| Մարգար Դարբէշեանից (ԴԼ) . . . . . | 12 | »   |
| Լևոն Բզնունիից . . . . .          | 11 | »   |
| Շուշանիկ Կուրդինեանից . . . . .   | 9  | »   |
| Արմենուհի Տիգրանեանից . . . . .   | 8  | »   |
| Եղիշէ Զաբենցից . . . . .          | 4  | »   |

Գալանդէրեանը ձայնագրել է նաև իրաներէն գրականութիւնից մանկական, դպրոցական, խմբական երգեր, որոնցից մի քանիսն արդէն լոյս են տեսել Թէհրանի իրանական թերթերում: Այդ հանգամանքն էլ վկայում է նրա՝ իրանական երաժշտութեան զարգացման համար մատուցած գեղեցիկ ծառայութիւնը:

## VIII

### ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

1944 թ. Մարտ 2-ին, Հինգշաբթի օրը, առաւօտեան ժամը 3-ին, մի ամսեայ ծանր հիւանդութիւնից յետոյ, Թէհրանի բժ. Բահէրի հիւանդանոցում, երաժշտագէտը յաւիտեան փակում է իր աչքերը: Նոյն օրը, հոծ բազմութեան ներկայութեամբ, ղին ուսամբարձ հիւանդանոցից փոխադրւում է «ս. Աստուածածին» եկեղեցին: Յաջորդ օրը՝ Ուրբաթ, առաւօտեան ժամը 10-ին, Թէհրանի հայոց Համայնական Խորհրդի նախաձեռնութեամբ, եկեղեցու բակում, մեծածաւալ սգակիրների ներկայութեամբ, տեղի է

ունենում սգահանդէս: Յուզիչ դամբանականներ խօսում են Թէհրանի Համայնական Խորհրդի և «Վերածնունդ» թերթի կողմից՝ պ. Հայկ Ղուկասեան, «Փալանդէրեան» երգչախմբի կողմից՝ երգիչ պ. Արա Տէր-Յովհաննիսեան, «Դաւթեան» («Քուշէշ») դպրոցի հոգաբարձութեան և աշակերտութեան զգացումների թարգման է հանդիսանում փոխ-տեսուչ՝ պ. Ալէքսան Տէր-Վարդանեանը, իրանահայ երիտասարդների Մշակութային Միութեան կողմից խօսում է պ. Մինասեան, ապա՝ պ. Մուշեղ Սարվարեան և Տ. Յովհ. քհ. Հաճեան և ուրիշներ: Բոլորն էլ ընդգծում են արւեստագէտի թէ՛ կրթական ասպարիզում և թէ՛ երաժշտութեան գծով կատարած գնահատելի դերը, շեշտելով նաև նրա անհատական բարեմասնութիւնները: Այնուհետև հսկայածաւալ հասարակութիւնը, նրա բազմաթիւ պսակներով ծածկւած դագաղը ձեռքերի վրայ տանում է մինչև Նադերի քառուղին, իսկ ժողովրդի մի սուար մասն ընկերակցում է մինչև Դուլարի «Բուրաստան» գերեզմանատունը, ուր տեղի է ունենում թաղման տխուր արարողութիւնը: Գերեզման են իջեցնում արւեստագէտին արեւի ոսկի շողերի և «Փալանդէրեան երգչախմբի երգի մեկամաղձոտ հնչիւնների ներքոյ, որ թէ՛ սգահանդէսի և թէ՛ թաղման ժամանակ հնչեցնում է նրա ձայնագրած «Անուշ» օպերայի *Բառաւայթ* նախերգանքը—«Վսւշ, վսւշ, Անսւշ»...

## IX

### ՍՊԱՀԱՆԳԷՍ


Փալանդէրեանի ծանր հիւանդութիւնը և յետոյ անսպասելի մահն իր երգչախմբի անդամներին ոչ միայն անսահման վշտով համակում է և խորհապէս յուզում նրանց հոգեկան աշխարհը, այլև նրանք երկար ժամանակ ապրում են այդ ծանր կորուստի տպաւորութեան տակ: Նրանք գիտակցում են, որ երգահանի մահը կորուստն է

17th of March 1845  
 18th of March 1845  
 19th of March 1845  
 20th of March 1845  
 21st of March 1845  
 22nd of March 1845  
 23rd of March 1845  
 24th of March 1845  
 25th of March 1845  
 26th of March 1845  
 27th of March 1845  
 28th of March 1845  
 29th of March 1845  
 30th of March 1845  
 31st of March 1845  
 1st of April 1845  
 2nd of April 1845  
 3rd of April 1845  
 4th of April 1845  
 5th of April 1845  
 6th of April 1845  
 7th of April 1845  
 8th of April 1845  
 9th of April 1845  
 10th of April 1845  
 11th of April 1845  
 12th of April 1845  
 13th of April 1845  
 14th of April 1845  
 15th of April 1845  
 16th of April 1845  
 17th of April 1845  
 18th of April 1845  
 19th of April 1845  
 20th of April 1845  
 21st of April 1845  
 22nd of April 1845  
 23rd of April 1845  
 24th of April 1845  
 25th of April 1845  
 26th of April 1845  
 27th of April 1845  
 28th of April 1845  
 29th of April 1845  
 30th of April 1845  
 1st of May 1845  
 2nd of May 1845  
 3rd of May 1845  
 4th of May 1845  
 5th of May 1845  
 6th of May 1845  
 7th of May 1845  
 8th of May 1845  
 9th of May 1845  
 10th of May 1845  
 11th of May 1845  
 12th of May 1845  
 13th of May 1845  
 14th of May 1845  
 15th of May 1845  
 16th of May 1845  
 17th of May 1845  
 18th of May 1845  
 19th of May 1845  
 20th of May 1845  
 21st of May 1845  
 22nd of May 1845  
 23rd of May 1845  
 24th of May 1845  
 25th of May 1845  
 26th of May 1845  
 27th of May 1845  
 28th of May 1845  
 29th of May 1845  
 30th of May 1845  
 31st of May 1845  
 1st of June 1845  
 2nd of June 1845  
 3rd of June 1845  
 4th of June 1845  
 5th of June 1845  
 6th of June 1845  
 7th of June 1845  
 8th of June 1845  
 9th of June 1845  
 10th of June 1845  
 11th of June 1845  
 12th of June 1845  
 13th of June 1845  
 14th of June 1845  
 15th of June 1845  
 16th of June 1845  
 17th of June 1845  
 18th of June 1845  
 19th of June 1845  
 20th of June 1845  
 21st of June 1845  
 22nd of June 1845  
 23rd of June 1845  
 24th of June 1845  
 25th of June 1845  
 26th of June 1845  
 27th of June 1845  
 28th of June 1845  
 29th of June 1845  
 30th of June 1845  
 1st of July 1845  
 2nd of July 1845  
 3rd of July 1845  
 4th of July 1845  
 5th of July 1845  
 6th of July 1845  
 7th of July 1845  
 8th of July 1845  
 9th of July 1845  
 10th of July 1845  
 11th of July 1845  
 12th of July 1845  
 13th of July 1845  
 14th of July 1845  
 15th of July 1845  
 16th of July 1845  
 17th of July 1845  
 18th of July 1845  
 19th of July 1845  
 20th of July 1845  
 21st of July 1845  
 22nd of July 1845  
 23rd of July 1845  
 24th of July 1845  
 25th of July 1845  
 26th of July 1845  
 27th of July 1845  
 28th of July 1845  
 29th of July 1845  
 30th of July 1845  
 31st of July 1845  
 1st of August 1845  
 2nd of August 1845  
 3rd of August 1845  
 4th of August 1845  
 5th of August 1845  
 6th of August 1845  
 7th of August 1845  
 8th of August 1845  
 9th of August 1845  
 10th of August 1845  
 11th of August 1845  
 12th of August 1845  
 13th of August 1845  
 14th of August 1845  
 15th of August 1845  
 16th of August 1845  
 17th of August 1845  
 18th of August 1845  
 19th of August 1845  
 20th of August 1845  
 21st of August 1845  
 22nd of August 1845  
 23rd of August 1845  
 24th of August 1845  
 25th of August 1845  
 26th of August 1845  
 27th of August 1845  
 28th of August 1845  
 29th of August 1845  
 30th of August 1845  
 31st of August 1845  
 1st of September 1845  
 2nd of September 1845  
 3rd of September 1845  
 4th of September 1845  
 5th of September 1845  
 6th of September 1845  
 7th of September 1845  
 8th of September 1845  
 9th of September 1845  
 10th of September 1845  
 11th of September 1845  
 12th of September 1845  
 13th of September 1845  
 14th of September 1845  
 15th of September 1845  
 16th of September 1845  
 17th of September 1845  
 18th of September 1845  
 19th of September 1845  
 20th of September 1845  
 21st of September 1845  
 22nd of September 1845  
 23rd of September 1845  
 24th of September 1845  
 25th of September 1845  
 26th of September 1845  
 27th of September 1845  
 28th of September 1845  
 29th of September 1845  
 30th of September 1845  
 1st of October 1845  
 2nd of October 1845  
 3rd of October 1845  
 4th of October 1845  
 5th of October 1845  
 6th of October 1845  
 7th of October 1845  
 8th of October 1845  
 9th of October 1845  
 10th of October 1845  
 11th of October 1845  
 12th of October 1845  
 13th of October 1845  
 14th of October 1845  
 15th of October 1845  
 16th of October 1845  
 17th of October 1845  
 18th of October 1845  
 19th of October 1845  
 20th of October 1845  
 21st of October 1845  
 22nd of October 1845  
 23rd of October 1845  
 24th of October 1845  
 25th of October 1845  
 26th of October 1845  
 27th of October 1845  
 28th of October 1845  
 29th of October 1845  
 30th of October 1845  
 31st of October 1845  
 1st of November 1845  
 2nd of November 1845  
 3rd of November 1845  
 4th of November 1845  
 5th of November 1845  
 6th of November 1845  
 7th of November 1845  
 8th of November 1845  
 9th of November 1845  
 10th of November 1845  
 11th of November 1845  
 12th of November 1845  
 13th of November 1845  
 14th of November 1845  
 15th of November 1845  
 16th of November 1845  
 17th of November 1845  
 18th of November 1845  
 19th of November 1845  
 20th of November 1845  
 21st of November 1845  
 22nd of November 1845  
 23rd of November 1845  
 24th of November 1845  
 25th of November 1845  
 26th of November 1845  
 27th of November 1845  
 28th of November 1845  
 29th of November 1845  
 30th of November 1845  
 1st of December 1845  
 2nd of December 1845  
 3rd of December 1845  
 4th of December 1845  
 5th of December 1845  
 6th of December 1845  
 7th of December 1845  
 8th of December 1845  
 9th of December 1845  
 10th of December 1845  
 11th of December 1845  
 12th of December 1845  
 13th of December 1845  
 14th of December 1845  
 15th of December 1845  
 16th of December 1845  
 17th of December 1845  
 18th of December 1845  
 19th of December 1845  
 20

[illegible]

Hygiene, 19 Septem. 1943

Henry Martineau



այն վաստակաւոր երաժշտագէտի, որն օժտւած էր ստեղծագործական հարուստ տւեալներով և որի կերտած արւեստը հայ երաժշտութեան պատմութեան հետաքրքիր էջերից մէկն է։ Ահա թէ ինչո՞ւ նրանք բարոյական պարտականութիւն են համարում կազմակերպել մի սգահանդէս։ 1944 թ. Մայիս 15-ին, երեկոյեան ժամը 7-ին, Թէհրանի «Հայ Ակումբ»-ում տեղի է ունենում արւեստագէտի յիշատակին նւիրւած երեկոն, ուր ներկայ են լինում մայրաքաղաքի երաժշտասէր հասարակութիւնից մօտ 500 հոգի։

Երեկոն բաց է անում իրանահայ բանաստեղծ՝ պ. Արտօ Տէրեանը, որ հասարակութեան ծանօթացնում է երգահանի համառօտ կենսագրութեան հետ, իսկ նրա երաժշտական ստեղծագործութիւնների արժէքաւորումը տալիս է պ. Հայկ Օհանեանը։ Ուշագրաւ է և այն, որ գեղարւեստական մասի ծրագրում երգւած քառաձայն երգերը, մեներգները, ինչպէս նաև ջութակի և թաւ ջութակի կըստորները կազմում են երաժշտագէտի ստեղծագործութիւնները։

Սգահանդէսին փայլ է տալիս «Գալանդէրեան» երգչախումբը, որ առանձին հմտութեամբ ղեկավարում է պ. Ռուբիկ Գրիգորեանը։ Այստեղ ընդգծենք մի կարևոր հանգամանք, որ Գալանդէրեանի ծանր հիւանդութեան շրջանում, երբ երգեցիկ խումբը մնում է առանց խմբավարի, այդ ժամանակ, երգչախմբի դիմումով, ղեկավարութիւնն երեք անգամ սիրալոյսով յանձն է առնում երիտասարդ արւեստագէտը։ Առհասարակ, նա անկեղծ և սրտցաւ վերաբերմունք է ցոյց տալիս երգահանի հանդէպ, որովհետև գտնում է, որ նա, իբրև ստեղծագործող, արժանի է ջերմ գնահատութեան։

Այդ երեկոյ էլ «Գալանդէրեան» երգչախումբը, Ռ. Գրիգորեանի ղեկավարութեամբ, մեծ յաջողութեամբ երգում է «Տէր ողորմեա», «Մեր ճամբան» և «Անուշ»-ի նա-

խերզանքը, երգեր, որոնք ներկաների վրայ խոր տպաւորութիւն են թողնում և նրանք համոզուում են, որ Գրիգորեանը ոչ միայն նուրբ երաժշտագէտ է, այլև օժտւած է խմբավարական հարուստ ձիրքով:

Հանգէսին առանձին երանգ են տալիս նաև իրանահայ երգիչ-երգչուհիները, որոնք խոր զգացմունքով և վարպետութեամբ երգում են Գալանդէրեանի երգերը: Այսպէս՝ օր. Լորիկ Մովսիսեանը մենեքուում է «Շատերն եկան», տիկ Արաքս Պետրոսեանը—«Աշուն», պ. Իշխանը—«Երգերը քո», իսկ Արա Տէր-Յովհաննիսեանը—«Ափսոսանք»:

Յիշատակենք նաև Թէհրանի սիրւած թաւ ջութակահար Դ. Կարապետեանի և ջութակահար Հ. Գրիգորեանի անունները, որոնք զեղարւեստական մեծ հաճոյք են պատճառում ներկաներին, թաւ ջութակի և ջութակի վրայ հրմտութեամբ ու քնքուշօրէն նւագելով Ռևերի № 1 և № 3-ը:

Իրենց գեղեցիկ և հարազատ արտասանութիւններով երեկոյի զեղարւեստական յաջողութեանը նպաստում և հասարակութեան ուշադրութիւնը գրաւում են տիկ. Վարդուհի Տէրեան—«Յուշարձան Ն. Գալանդէրեանի», Արամ Գառօնէ—«Հրաժեշտի զագէլ» և դերասան Մ. Մարութեան: Առհասարակ, երեկոն անցնում է ջերմ և յուզիչ մթնոլորտում և հանդիսականները խորապէս ապրում են երաժշտագէտի կեանքը պատկերող յուշերով ու յիշատակներով:

## X

### ՄԱՍՈՒԼԸ ԵՒ ՏՊԵԳԻՐ ԵՐԳԵՐԸ

1935 թւին, Թէհրանում, մեր խնդրանքով Գալանդէրեանը գրեց իր ընդարձակ կենսագրութիւնը, որ մինչև օրս էլ մնում է անտիպ: Այնուհետև, 1936 թւին, կենսագրական սեղմ տւեալներ, իր լուսանկարով, լոյս տեսան «Հայ հանրագիտակ»-ի (Հ. Մ. Պոտուրեանի) Բ. գրքում: Յետոյ իր լուսանկարը, մի քանի երգերը և համառօտ կեն-

սագրութիւնը տպւեցին Գահիրէում հրատարակող «Գաֆֆ-նաւա» երգարանի Ե. գրքում (էջ 589), 1938 թւին Հայկ Օհանեանը «Յուսարէր»-ում երաժշտագէտի մասին գրեց ընդարձակ մի յօդած: Նոյն թւականին Ամերիկայի «Պայ-ֆար» թերթում լոյս տեսաւ մեր երկարաշունչ յօդածը: Ուղիղ չորս տարի անց, 1942 թւին, Թէհրանում հրատարակող «Վերածնունդ», «Ալիֆ» (թիւ 111) և «Արուեսակ» (թիւ 80—81) թերթերում, երաժշտագէտի 30 ամեայ յոբելեանի առիթով, լոյս տեսան գնահատական յօդածներ, յուշեր, ձօներգներ և իր լուսանկարը: Նոյն 1942 թւին, «Երաժշտագէտ Նիկոլ Գալանդէրեան» խորագրով մի ընդարձակ յօդած ստորագրեցինք «Արուեսակ» ի 54, 57, 60 և 63 համարներով: 1944 թւին, մահւան առիթով, կենսագրական հակիրճ տեղեկութիւններ և յօդածներ հրատարակեցին Թէհրանի «Վերածնունդ» (Մարտ 6) և «Ալիֆ» (թիւ 58) թերթերում, իսկ «Յախաւեշ»-ի խմբագրութիւնն իր ամսագրի թիւ 5-ը (1944 թ.) ամբողջապէս նւիրեց երգահանին: Դա մի գեղեցիկ յուշարձան է՝ նւիրած նրա պայծառ յիշատակին: Նոյն 1944 թւին, Նիւ-Եօրքի «Հայաստանի Կոչնակ» ում (թիւ 48, 49, 51 և 53), լոյս տեսաւ «Երաժշտագէտ Նիկոլ Գալանդէրեան» խորագրով մեր ընդարձակ յօդածը: Մի տարի անց, 1945 թւին, երաժշտագէտի մահւան տարելիցի առիթով, «Ալիք»-ի թիւ 44 և 45-ում, Հայկ Օհանեանը «Գալանդէրեանի ստեղծագործութիւնները» խորագրով լոյս ընծայեց մի յօդած:

Ահա և արեւստագէտի ձայնագրած *սպագիր* երգերի պատկերը.

- |                     |         |      |               |
|---------------------|---------|------|---------------|
| 1. «Այնպէս նազիկ»,  | մեներգ, | խօսք | Վահան Տէրեանի |
| 2. «Ծովափին»        | »       | »    | Դեհի          |
| 3. «Պապոյտ աղջիկ»*) | »       | »    | »             |

\*) Երեք երգերն էլ հրատարակել է Թէհրանի «Հայ Երգ» Մի-

4. «Է՛յ, մարալ աղջիկ»<sup>1</sup>, մեներգ, խօսք Արամ Երեմեանի
5. «Ես իմ անուշ Հայաստանի» » » Եղիշէ Չարենցի
6. «Մեր ճամբէն խաւար» » » Յ. Թումանեանի
7. «Շատեր եկան» » » Դևի
8. «Ես սիրում եմ» » »
9. «Գարուն է» » »

#### 10. Ակնայ օր-օր»-ը

#### 11. «Հովիկ»<sup>2</sup>

12. Վեց մանկական երգեր, Մ. Սարգսեանի «Նոր Հաւ-  
կեր»-ում:

13. Չորս իրաներէն մանկական երգեր, Թէհրանի «Ռահ-  
նընսայի գեմդէկի» թերթում:

Յիշատակենք քնարական այն երգերը ևս, որոնց  
յայտնի երգիչ երգչուհիներ երգել են խօսամեքենայի (գը-  
րամֆօնի) երգապնակները վրայ և այսօր ժողովրդակա-  
նութիւն են վայելում: Մյգ մենեղգներից յայտնի են՝ «Ո՛հ  
տրտունջ», «Մի թունաւորիր» և «Մոռանալ, մոռանալ»,  
իսկ խմբերգներից յիշենք՝ «Սարեր ման կուգայ», «Այս  
ինչ աղւոր լուսին կայ», «Ու հովը բորբոք» և «Մանգաղդ  
ոսկի մահիկ է»:

### XI

#### ԳԱԼԱՆԴԵՐԵԱՆԻ ԳԵՐԸ

Հայ ժողովրդի վաստակաւոր երգահաններից մէկն է

ութիւնը, որի հիմնադիր անդամները—Գառնիկ Բարսեղեան, Թորգոմ  
և Աշոտ Մակարեաններ, Համլէտ Յովսէփեան, Դերենիկ Արրահամեան,  
Միուշ Նզանեան և Օլիկ Տէր-Օհանեան, 1942 թին համախմբուելով մի  
ղրօշի ներքոյ, իրենց նպատակ են դնում ապագրել միայն Գալան-  
դերեանի երգերը:

1) Հրատարակել է Նոր-Ջուղայի Հայ կանանց «Դիմութեան»  
Միութեան Վարչութիւնը:

2) 5—11 էրգերը ապագրել են Գահիրէի «Գանձարան» երգա-  
րանի Ե. և Զ. զրքերում: Ար. եր.

Գալանդէրեանը\*), որ 1911 թ. Մայիս 11-ից հրապարակ  
գալով արեւստի դիրքերում, ամբողջ երեք տասնեակ տա-  
րիներ անխոնջ ու անվկանդ գործունէութեամբ ոչ միայն  
իր ձեռքում բարձր է պահել հայ երաժշտութեան դրօշը,  
այլև յանուն հայ երգի զարգացման՝ նւիրել է իր սիրտն  
ու հոգին, իր լաւագոյն առանձնայատկութիւնները: Բայց  
նրա հասարակական արժէքը կայանում է նախ երաժշտա-  
կան բեղմնաւոր ստեղծագործութեան յազմեղանգ արտա-  
յայտութեան մէջ, Հայ արեւստին նա նւիրել է մօտ հա-  
զար գունագեղ երգեր, որոնցից ստանում էք գեղարես-  
տական տարբեր տպաւորութիւններ: Դրանցից շատերն ունեն  
արեւելեան երաժշտութեան խորութիւնը և երգում են ժո-  
ղովրդի շրթերի վրայ, հանգամանքներ, որոնք բնորոշում են  
նրա երաժշտական արեւստի գծով կատարած խոշոր դերը:  
Այդ տեսակէտից նա Իրանի թէ՛ հայ և թէ՛ պարսիկ երա-  
ժշտագէտների շարքում առանձին տեղ է գրաւում: Էլ  
չենք նշում այն երևոյթը, որ նրա ձայնագրած «Լալաւի  
նոսր» օպերան միայն բաւական է, որ իր անունը յիշա-  
տակւի հայ երաժշտութեան պատմութեան մէջ: Բայց նրա  
երաժշտական կարողութեան մասին աւելի յստակ գաղա-  
փար տալու համար այստեղ առաջ բերենք Հայաստանի  
տաղանդաւոր երաժիշտ-վիօլօնչիստ՝ Արտ. Այվազեանի  
կարծիքը.

— Ինչ վերաբերում է իրեն՝ Գալանդէրեանին, — գը-  
րում է նա, — շատ լաւ տպաւորութիւն թողեց նա իմ վրայ

\*) Գալանդէրեանն երաժշտական գործիքներ նորոգող հմուտ  
վարպետ էր. նա տիրապետում էր բոլոր նւագարանների կառուցած-  
քին և հասկանում նրանց տէխնիկան: Ահա թէ ինչու կարողանում էր  
նորոգել վնասուած երաժշտական գործիքները — դաշնամուր, վիօլօնչէ,  
ջութակ. կլարնէտ, սրինգ, քեամանչէ, թառ, սաղ, սանթուր, մանդո-  
լին, ուտ, կօնտրաբաս, դափ (թմբուկ), հարմօնիկ, ճիւղնուր, պիգօլօ  
(փոքրիկ սրինգ), տրօմպէտ (նշափող), նաղարա (թմբուկ), ֆագօտ  
(սրնգի նման մի գործիք, որ բամբ ձայն ունի): Ար. Եր.

և տաղանդաւոր ձայնագրող լինելը ցոյց տւեց: Նա ունի մեծ ընդունակութիւն և օժտւած է երաժշտական տրամադրութիւններով:

Այս տողերը մի հեղինակաւոր արւեստագէտի կողմից ընդգծւած վկայութիւններ են, որոնք հաստատում են Գալանգէրեանի երաժշտական արւեստի ինքնուրոյն արժեքը:

Մի բնորոշ գիծ ևս կազմում է նրա մի այլ գեղեցիկ յատկանիշը: Դա նրա համերգային գործունէութիւնն է, որի պատկերը տեսնում ենք գլխաւորապէս Իրանի մայրաքաղաքում: Երկար տարիներ գործելով Թէհրանում, հայ ժողովրդի սրտին մօտիկ, կազմակերպել է 35-ից աւելի համերգներ: Նա հանդէս է եկել գլխաւորապէս իր երգեցիկ խմբով և երաժշտական ինքնուրոյն ստեղծագործութիւններով: Այդ գծով էլ նա մայրաքաղաքի հայ հասարակութեան մէջ ոչ միայն հրահրել է երաժշտութեան սէրը, ոչ միայն նրա մէջ տաքածել է ժողովրդական երգն ու քառաձայն երգեցողութիւնը, այլև զարգացրել է նրա երաժշտական ճաշակը: Այդ տեսակէտից Թէհրանի երաժշտասէր նոր սերունդը շատ բան է պարտական Գալանգէրեանին:

Ապա ով կարող է ժխտել այն փաստը, որ արւեստագէտի երգեցիկ խմբում բազմաթիւ հայ երիտասարդներ, օրիորդներ և տիկիկներ մշակել են իրենց ձայնը, միաժամանակ զարգացել ու խորացել երաժշտութեան ու երգի արւեստի մէջ: Դրանցից առանձնապէս յիշենք նուրբ երգիչ պ. Արա Տէր-Յովհաննիսեանին, որ այնքան հարազատութեամբ երգում է և արտայայտում Գալանգէրեանի որոշ երգերի ոգին ու էութիւնը և, որ էականն է, նրա արւեստի տարածման գործում խոշոր ծառայութիւն է կատարել: Այդ տեսակէտից ուշագրաւ են երաժշտագէտի արձանագրած հետեւեալ բնորոշ տողերը,



Ն. Գալստիգեհան, Լորիկ Մովսիսեան և Արա Տէր-Յովհաննիսեան

— Իմ գործունէութեան ճանապարհը եղել է փշոտ, և չորս կողմս էլ սառցով պատած, մի խօսքով մի Գողգոթա: Մտեղծագործ աշխատանքներս շալակած, բարձրացել եմ այդ փշոտ ու սառցով պատած ուղիով դէպի վեր: Այդ միջոցին իմ միակ փարոսս, յոյսս ու ոգևորիչներս եղել են ընդհանրապէս խմբի երգիչ ու հիններս և պ. Արա Տէր-Յովհաննիսեանը, որոնք ինձնից անբաժան են եղել այդ նեղ օրերին... Իմ երգերը, թէև այսքան քիչ հրատարակւած, բայց այսօր շատ տարածւած են, շնորհիւ իմ աղւած համերգների, ընդհանրապէս երգչախմբի, իսկ մասնաւորապէս օր. Լորիկ Մովսիսեանի և պ. Արա Տէր-Յովհաննիսեանի:

Այդ երգերից շատերն այսօր երգւում են ոչ միայն Իրանի հայաբնակ քաղաքներում, այլև արտա-

սահմանի հեռաւոր վայրերում, իսկ երկու երգ՝ «Հէյ, մա-  
րալ աղջիկ» (Ար. Երեմեանի) և «Կանցնեն օրերն, Անուշ  
ջան» (Յովհ. Թումանեանի) հնչում են նաև Հայաստանի  
մայրաքաղաքի՝ Երևանի ձայնասփիւռի կայանից։

Այժմ մնում է պարզել, թէ իբրև ստեղծագործող-  
երաժիշտ ինչո՞ւն է կայանում Գալանդերեանի դերը։

Եթէ անմահ Քրիստափոր Կառու-Մուրզան հանդիսա-  
ցել է առաջին հայ արևոտագէտը, որ հիմք է դրել խմբ-  
բազման երգեցողութեան և հայոց եկեղեցիների կամարնե-  
րի ներքոյ հնչեցրել է քառաձայն պատարագը, եթէ Մա-  
կար Եկմաշեանը հայ ժողովրդին նւիրել է քառաձայն պա-  
տարագի հոյակապ արևոտը, եթէ անմոռանալի Կովսեանն  
իր ձայնագրած ու մշակած ժողովրդական-գեղջկական եր-  
գերով խմբական երգեցողութեան, դաշնամուրի և մե-  
նեքներին համար կերտել է երաժշտական մի սքանչելի  
արևոտ, եթէ Նիկողայոս Տիգրանեանը զարկ է տւել դաշ-  
նամուրային գրականութեան և հարազատութեամբ արտա-  
յայտել է արևելեան երաժշտութեան էութիւնը, եթէ Արմէն  
Տիգրանեանն իր ձայնագրած սքանչելի «Անուշ»-ով, Զու-  
հաճեանից յետոյ, հանդիսացել է հայկական օպերայի տա-  
ղանդաւոր գրօշակակիրը, եթէ Այեխանդր Սյեմնիստեանը  
հայ ժողովրդի մէջ եւրոպական սիմֆոնիի հիմքն է դրել  
իր Երևանի ու Ղրիմի էսկիզներով, իսկ «Մլմաստ» օպե-  
րայով կառուցել է արևելեան գեղարւեստական առաջին օ-  
պերան, եթէ Ռուսանու Մեղիֆեանը քնարական երգը մը-  
շակել է գեղարւեստական խոր նրբութեամբ, ապա Նիկոլ  
Դաւանդեանն իր բազմերանգ ստեղծագործութիւններով  
զարկ է տւել հայ երաժշտական մշակոյթին և յօրինել է  
ժողովրդական ակունքներից վերցրած՝ հայկական ոճով ու  
երանգներով արւեստի գեղեցիկ էջեր, միաժամանակ հայ-  
կական իւրայատուկ ոճով սիրերգների դպրոցի հիմք է դը-  
րել, երևոյթներ, որոնք այսօր աւելի արժէքաւորում են

նրա երաժշտական արտադրութիւնները: Ահա թէ ինչո՞ւ  
նա ունի իր ուրոյն տեղը հայ երաժշտութեան պատմու-  
թեան մէջ:

## ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ



## ՆԻԿՈԼ ԳԱԼԱՆԳԻՐԵԱՆ

Ֆրանսացի հուշակալուր գրող Ռոմէն Ռոլանն իր Բեթ-հովէնի ուսումնասիրութեան մէջ գրում է. «Ես հերոս չեմ անւանում նրանց, որոնք յաղթական են մտքով կամ ուժով. ես անւանում եմ հերոս նրանց, որոնք մեծ են իրենց սրտով»:

Որքան պատշաճում են այս խօսքերը հանգուցեալ Գալանդէրեանին:

Իրապէս իր ողջ կեանքը եղաւ համակ նւիրում, համակ զոհողութիւն, մի անհուն սրտով, մի աննկարագրելի բարութեամբ իր համար հայ երաժշտութիւնից բացի, ձեռքեալ բոլորը երկրորդական էին: Իր գործերը (1000 կտոր) հրապարակի վրայ են. այնտեղ իր սիրած ժողովուրդն է իր մաքուր զգացումներով ու իր մեծ սրտով: Իր մտերմիկ խօսակցութիւններէջ մէկում պատմում էր, որ կեանքի ամենամեծ հաճոյքն այն է, երբ անցնում է փողոցով, յանկարծ լսում է իր երգերից. կանգնում է և լսում. այդ րոպէին իրեն աշխարհի ամենաերջանիկ մարդն է զգում:

Այլասէր էր, բառիս ընդարձակ առումով: Որքան աշակերտներ սովորել են նրա մօտ առանց որեւէ նւիրական վարձատրութեան. կամ թէ ինչպիսի սրտբացութեամբ բոլորին (ովքեր դիմում էին իրեն) իր ձեռքով գրում, տալիս էր իր անտիպ աշխատութիւնները և այդ դեռ բաւական չէ, նստում էր ու սովորեցնում:

Բարի էր, նոյնիսկ չափից աւելի: Իր մասին եղած

աչառու քննադատութիւններին անտարբեր էր ու ժպտե-  
րես է, որ գլխաւորն է, մեծահոգի ու ներող... Ինչքան  
անգամներ, թիւրիմացաբար կամ թէ դիտաւորեալ, երգել  
են իր երգերը այս ու այն կողմ, առանց յիշելու նոյն-  
իսկ իր անունը...

Ինքնանէր էր ու հպարտ, իր նիւթական ամենա-  
ծանր կապուածեան ժամանակ իսկ: Նոյնիսկ մօտիկներէի ու-  
շադրութիւնը նրան վիրաւորում էր ու յուզում:

Լաւատես էր, զօն, բաւական... Միշտ ուրախ, միշտ  
լաւ ու միշտ շնորհակալ բոլորից:

Գալանդէրեանն արդէն իսկ իր կենդանի ժամանակ  
յղկել, բարձրացրել է իր արձանը, մի արձան, որը կապւած  
է մեր ժողովրդի գոյութեան հետ: Այդ նրա գեղեցիկ եր-  
գերն են, որ նրան պիտի պահեն անմահ: Գաղտնիարական  
մարդկանց համար ասելի մեծ հաճոյք չկայ, քան այն, որ  
հասնում են իրենց իդէալին, թէկուզ իրենց կեանքի գնով:  
Գալանդէրեանն այդ սակաւաթիւ մարդկանցից էր:

Ռ. ԳՐԻԳՈՐԵԱՆ



## «ՍԻՄՓՕՆԻՆԵՐՍ ՄՆԱՅԻՆ»

Հէնց 1924 թւականի սկզբին էր, որ համակրանք և յարգանք զգացի ինչպիսի այն արտաքինով անպաճոյճ, պարզ, բայց հոգով վեհ և զգացումներով լի ուսուցիչս, որի մէջ նկատեցի նաև մի արտաքոյ կարգի ընդունակութիւն։

Սկսեցի յաճախակի գնալ նրա մօտ, մօտիկից ծանօթանալ նրա բնաւորութեան, նրա ունեցած երաժշտական ընդունակութիւնների հետ։ Կարճ ժամանակի ընթացքում զգացի, որ նա ունի իր մէջ մի գնահատելի արժանիք, որը, սակայն, պէտք էր երևան բերել։ Անհրաժեշտ էր նրան խրախուսել, քաջալերել և ծանօթացնել նրա երգերն ամենին, երգել ամէն տեղ և ամենի համար։

Ո՞վ չէր ճանաչում նրան, ո՞վ չէր տեսել նրան փողոցով անցնելիս, երբ գլուխը թեք, աչքերը յառած գետինին և ձեռքը շարժելով երգ էր յօրինում...

Այդպէս էր արեւստագէտը շատ անգամ ստեղծագործում իր երգերը, որոնք անբան պարզ էին, անպաճոյճ, զգայացունց, հոգու հետ խօսող և վերացնող...

\* \* \*

Անցան տարիներ։ Ես էլ ուսուցչիս նման եղայ երգի երկրպագու և դարձայ նրա ամենամօտ ընկերը, նրա հոգեկան ապրումներին լաւ ծանօթ և անբաժան մի ընկերը։

Իմ և նրա լիբիքական ապրումների մէջ կար մի ընդհանուր կապ և ներդաշնակութիւն։ Սակայն իմ մէջ մի գաղափար հետզհետէ ընդլայնուեմ և զարգանում էր։ Դա

Նրան սատարելու, բարձրացնելու վեհ գաղափարն էր:

Ծանօթացնել նրա երգերը հասարակական լայն խա-  
ւերին և արժէքաւորել նրան. գնահատել նրա ընդունա-  
կութիւնները: Դա, իմ կարծիքով, մի նոր քայլ էր դէպի  
հայ երաժշտութեան ուղին, հայ երգը զարգացնելու և ճո-  
խացնելու մի գեղեցիկ ձև:

Նրան արժէքաւորելու մտադրութիւնս աւելի ծա-  
ւալ էր ստանում, երբ տեսնում էի իմ առջև կանգնած մի  
համեստ հայ երաժիշտ, որ զերծ էր պարծենկոտութիւնից  
և հեռու էր հաւակնութիւնից ու փառասիրութիւնից:

Նրա հաճոյքը միայն ու միայն իր երգերն էին, ու-  
րոնց լսելիս վերանում էր և այնքան զգացւում, որ իր  
հրճաւանքը փոխւում էր արտասուքի... Իրօք, երբ նա լսում  
էր իր երգերը, այնքան էր յուզւում և ոգևորւում, որ  
կարծես նրա առաջ բացւում էր մի նոր աշխարհ... Նա  
ամէն տեղ, ամէն ժամ ու վայրկեան երգ էր զգում ու  
լսում. երգը նրա հոգին էր, նրա ոգևորութեան աղբիւրն  
ու կորով ներշնչողը...

\* \* \*

Քանի-քանի անգամներ եմ տեսել նրան մեն-մենակ,  
աղօտ լոյսի տակ, ցուրտ սենեակում աշխատելիս. նա  
ստեղծագործում և դարսում էր իր երգերը: Ո՛րքան կո-  
րովի և սիրոյ, որքան բողոքի ու տենչանքների, յոյսերի  
և յոյզերի վառ արտայայտութիւններ կան նրա տետրակ-  
ներում: Երբ թերթում ես, համոզւում, որ ամէն մի երգ  
մի նոր ձայն, մի նոր երանգ և մի նոր արտայայտու-  
թիւն ունի:

Նա չէր յոգնում. նրա միտքն ու հոգին պատրաստ  
էին միշտ ստեղծագործելու:

Վերջին անգամ, երբ պատրաստւում էինք նրան  
հիւանդանոց տեղափոխելու, երկխայի նման արտասւում

էր. նրա դէմքի վրայ դեռ ապրելու, երկար ապրելու տենչն էր փայլատակում. ձեռքն ամուր խփում էր ծնկներին և բողբոլւմ ասելով. «Ափսոս իմ սիմֆոնիները մնացին. ես դեռ կարող եմ արտադրել»:

Նա կարծես վստահ էր, որ այլևս իր սենեակը չի վերադառնալու, սակայն նրան ամենից շատ յուզում էր այն մտահոգութիւնը, որ իր հարիւրաւոր ստեղծագործութիւնները կը մնան անտիպ և իրենից յետոյ մէկ-մէկ կանհետանան...

Նա հնարաւորութիւն չունէր իր երգերը տպագրութեան տալու. «Ինչ հետ թող մեռնեն նաև իմ երգերը», արտասուքն աչքերին կրկնում էր նա յուսահատ:

Բայց ոչ, նրա երգերը չեն մեռնի. նրանք կը հնչեն ամէն տեղ. կը գայ մի օր, երբ արւեստագէտը կը գնահատի իրեն վայել արժանիքներով, երգերը կը տպագրւեն և մատչելի կը դառնան հասարակութեան. և նրա ամէն մի երգը կը լինի հայ երաժշտութեան մի գեղեցիկ ծաղիկը:

«Ժողովուրդը, — ասում էր նա, — տեղին գնահատելու սովորութիւն չունի. նա միշտ փարած է «Գնահատելի, արի սիրեմ»-ի գողափառին»:

Սակայն, նրա «Գալանդէրեան» երգչախումբը, միշտ հաւատարիմ իր կոչման, որոշել է անմահ պահել նրա երգերը, որոնք մեր հոգիներին լաղաղութիւն և անգործութիւն են պարգևում. այդ երգերը մեր հոգուց են բղխել: Ո՛չ մի արգելք, ոչ մի խոչընդոտ չի կարող մեզ յետ կասեցնել մեր ընտրած ուղիից:

Գնահատել և արժէքաւորել նրա ստեղծագործութիւնները, նշանակում է դրատել հայ երգը և գնահատել անմահ երաժշտին:

Ք.

Չ Օ Ն Ե Ր Յ

ԵՐԱԺԻՇՑ ՆԵՆՈՒ ԴԱԼԱՆԳԻՐԵՑԱՆԵՆ

Իր երաժշտական գործունեութեան 30-ամեակի առթիւ

Մայրիկդ քաղցրիկ քեզ օրօրեց եփրատ գետի զով եղերքին,  
Ու մեծասքանչ Հայոց լեզուով օրօր երգեց քեզ սրտադին.  
Ակն քաղաքի ականակիտ աղբիւրների ակունքն անուշ՝  
Հոգիդ լցրին երգ ու տաղի վառ յուշերով՝ սէր ու քնքուշ:

Արարատեան Աշխարհի մէջ, Մայր Արաքսի ափերին մօտ,  
Դու զգացիր մեր երգասէր ժողովուրդի երգի կարօտ.  
Մեծահանճար Կոմիտասի սանդղագործ միտքն ու հոգին՝  
Ներշնչեցին քեզ յոյս ու սէր և պաշտամունք՝ մեր Հայ Երգին:

Սէգ ու սիրուն սարերն Հայոց, արտեր, դաշտեր, գետակ,  
աղբիւր,  
Գեղջուկի սէրն ու աշխատանք՝ ունին երգեր հազար ու բիւր,  
Եղանակի մշակ դարձար, երգի մեղսւ, ձայնի խորան,  
Երգեցիր ու երգել տւիր մեր երգերը մեղրածօրան:

Իսկ իմ նըւէր յոբելեանիդ՝ տամ քեզ համար ու քեզ յարմար,  
«Լուրդալուր»ի սրինգն անուշ և սէր երգեր մեր անհամար.  
Սրանց խառնենք Լալաբ սարի զառ վառ ծաղկունք,  
հիւսենք պսակ՝  
Ու զարդարենք քո սէգ ճակատ, Մշակոյթի անվարձ մշակ:

Սարն ու հովիտ Հայաստանի թող արձագանք տան ու խնդան,  
Եւ երգերիդ ձայներն անուշ հասնեն մինչև գետ Հրազդան.  
Լուսապայծառ երկիրը մեր՝ յաւերժապէս խորին խորհուրդ՝  
Թող սիրէ քեզ և քեզանով թող միշտ խնդան Հայ ժողովուրդ:

## ԵՐԶԻ ՎԱՐՊԵՏԻՆ



Քո երգերում ջերմ սրտերի սրտամորմոք մրմունջ տեսայ,  
Թախծոտ սրտի, սէր ու վշտի յուսակտուր տրտունջ տեսայ,  
Հագողս երկնի, անուշ երգի, գարնանային ծաղիկ տեսայ,  
Քնքոյշ հոգու, կարօտ սրտի վառ սիրով լի ժպիտ տեսայ:

Ա՛յնպէս քնքոյշ, ա՛յնպէս անուշ, ա՛յնպէս ջերմ են երգերը քո,  
Ազիզ սրտի վառ յոյսերի ոսկի սաղ են երգերը քո,  
Մայիս ամսի կարմիր վարդի գոհար շաղ են երգերը քո,  
Ուրախ կեանքի եղեմական կանանչ բաղ են երգերը քո:

Հիմի ա՛յնպէս, երգի վարպետ, սիրտդ պայծառ, հոգիդ  
անպարտ,  
Երբ կանգնել ես երգի էջիով, հազար հրով, ա՛յնպէս  
հպարտ,  
Հիւսիս դու մեզ զմրուխտ երգեր, զառ-վառ երգեր, երգեր  
անգին  
եւ ընդունիր մեր սրտագին սիրոյ ողջոյն բիւր  
ջերմագին\*):

Նոր-Չուղա, 11 Յունիս 1942.

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

\*) Սոյն ստանաւորը խոր զգացմունքով արտասանեց օր. Ժուլիէտ  
Հանանեանը, 1942 թ. Նոր-Չուղայի «Հայ Ակումբ»-ում, երաժշտա-  
գէտի 30-ամեայ յօբելեանին նւիրւած հանգիստում: Ցալաւորութիւնն  
այնքան խոր էր, որ թէ՛ յօբելեանը և թէ՛ շատերը լուռ արտասուեցին  
թմբ.

## ԵՄ ԵՐԳԵԼ ՉԳԻՏԵՄ

Սիրելի Նիկոլ Գալանդէրեանցի

Ես այնքան, այնքան սիրում եմ երգել,  
Բայց, ափսոս, ափսոս, երգել չգիտեմ.  
Երգիր, այս կեանքն էլ մի տխուր երգ է,  
Երգիր, ամենքը գիտեն, այդ գիտեն.

Այս անընտել երգերը դու տես,  
Այս հոգեհամբոյր երգերը երգիր.  
Երգիր, սիրելիս, դու երգել գիտես,  
Ես այնպէս, այնպէս գերի եմ երգի.

Դու երգիր, երգիր, երգիր, սիրելիս,  
Երգիր, երգերդ թող դիւթեն, դիւթեն.  
Երգիր, որ չլաս մէկին սիրելիս.  
Ես, ափսոս, ափսոս, երգել չգիտեմ...

1942, Քէլերան.

ԴԵԻ

## ԹԵՒԵՐԸ ԵՐՁԻ...

Ն. ԳԱԼԱՆՆԻՐԵԱՆԻՆ  
Իր գործ. 30-ամեակի առթիւ.

Բախում են, բախում բաց, լայնատարած,  
Քնքշասահ, շոյիչ թեքը երգի.

Ու իր խաղերը մեր հոգուն թառած՝  
Տալիս են մեզ յոյզ՝ ժպտի ու վէրքի.

Սրահի աղօտ բաղամարդ գրկում  
Սաւառնում են պարզ երգերը հայի.  
Ու խոր թափանցում, յուզում, մրրկում՝  
Անդամ անտարբեր հոգուն ամայի.

Դարերից բերած, դարերում մեխած  
Մի նոր երգի գամ մեխում է խորունկ,  
Հայաշունչ հայի մատներից զեղւած.  
Որպէս մի գմուռս, մխացող մի խունկ.

Տառապանքների քուրում ջեր կոփւած  
Ու զրկանքների գրկում օրօրւած,  
Ելնում է յաղթ, կուռ հնչում ամբակուռ  
Ու շփւում նրբին հոսանքներին հուր.

Քանի որ ունի իր հոգու խորքում  
Դարերից բերած անթեղւած մի կայծ,  
Երբէք չի կիզւում, նա չի մոխրանում,  
Մնում է անմար, յաւէտ շիկացած.

Երգերդ անվերջ թող հոսեն, հոսեն  
Ու անվերջ, անվերջ Հայ սրտից խօսեն.  
Հայը չի մեռել, չի մեռնիլ բնաւ,  
Քանի որ ունի այդ հրից անբաւ.

Ա. ԱՐԻԱՋԷ

## ՏԽՈՒՐ ՏՈՂԵՐ



Պարտիզիս միջի բարդին երկնամբարձ,  
Մեղմ սոսափում է, սըւսըւում կամաց,

Սոսափիւնի մէջ մի ձայն եմ լսում,  
Այդ դու ես կարծես, որ երգ ես հիւսում,

Եւ ուզում եմ ես՝ մի պահ տեսնել քեզ,  
Սակայն դու չկաս, հեռու ես անտես:

Անձրեւ տխուր թափւում է կամաց,  
Սիւբը ֆիշում է, անցնում յամրընթաց:

Նայում եմ անթաքթ, նայում քո ճամբին,  
Դու չես երեւում, չկաս բնաւին:

Թափւում են դանդաղ, թափւում շիթ առ շիթ,  
Իմ հէզ աչքերից արցունքներ վճիռ:

Պարտիզիս միջի բարդին երկնամբարձ,  
Տխուր շշնաց մեկնումդ անդարձ:

## ԿՈՄԻՏԵՍԻ — ՀԵՏՔԵՐՈՎ

Դալանդէրեանի յիշատակին

Նւագում էր Կոմիտասը,  
Գրկած լոյսը հանճարի.  
Նւագի հետ սլանում էր  
Երիտասարդ մեր հոգին:

Երբ թափում էր լոյսն արեւի՝  
Տաճարն հայոց լիւններին,  
Վերանում էր յաւերժի հետ  
Կոմիտասի սուրբ հոգին:

Ու թրթրոնները լարերի,  
Պատմութեան հետ վաղեմի,  
Դարերի հետ բերում էին  
Պայծառ կերպարը հայի:

Լիւր, ակնապիշ լսում էիր,  
Գրկած վիշտը հայրենի.  
Ախ, ով զիտէր, սիրտդ էր բռնել  
Ժպտուն ճամբան Անմահի:

Բռնկեցիր դու մեր կեանքում՝  
Հայրենի լաց ու խինդով.  
Եւ մօտեցար հառաչանքին՝  
Ժողովրդի երգերով:

Լիմա երգդ լի ու ցնծուն,  
Հայրենի տան կարօտով,  
Ժողովրդի փառքն է կոփում,  
Հոգուդ պայծառ լոյսերով.  
Թէրան

ՌԵԴ

## ՔՈՒ ԵՐՔԵՐԸ

Երաժօժ. Ն. ԳԱԼԱՆԳԻՐԵԱՆԻՆ

Հովերը զով հեռուններից վար իջան,  
Շշնջում են բարդինները պուրակում.  
Լոյս ամպերում լուռ սահում է լուսնկան,  
Մեզմ թախիծ է իջել զմրուխտ դաշտերում:

Սաւառնում են տառապները լուսեղէն,  
Գրկած կարօտ, սէր ու վշտեր անհատնում.  
Այդ քո երգի հնչիւններն են հրեղէն՝  
Մեզմ գիշերւայ ստւերներում թափառում:

Թափառում են՝ շուրջս, հեռուն, ամէն տեղ՝  
Գո երգերի մեղեդիները լուսեղ...

Քէնդահ

ԼԵՒՈՆ ԲԶՆՈՒՆԻ

# ՀԱՌՈՒԹԻՒՆ Է, ՀԱՌՈՒԹԻՒՆ...

Ն. ԳԱԼԱՆԴԻՐՅԱՆԻ  
անմահ յիշատակիմ

Փլաւ մի բան սրտիս մէջ ու փշրեց մի սափոր...  
Աչքերիս թաց փեղկերից բղխաց աղբիւր յորդառատ,  
Մի ձեռք կոկորդա սեղմեց, ծեծեց հոգիս վիրաւոր,  
Լաւեց մի ձայն հեծկլտուն—մի բու վայեց յուսահատ...

Սանն, գունաթափ ու դալուկ դէմքիդ աչքերս գամած,  
Այն տրտմանուշ ու անկեղծ՝ քաղցր ժպիտդ եմ փնտռում,  
Եւ տեսնում եմ, ահ, կարծես, նորէն ոգի, շունչ առած՝  
Քայլում ես դու զլիսիկոր ու ինչ որ երգ մրմնջում...

Եւ կարծես թէ՝ «Անուշի» հոգին՝ հոգուդ փարւած սեղմ՝  
Մրմնջում է ու նոււմ—ախ, իմ «Սարօն» ուր է, ուր...  
Եւ դու ժպիտը շուրթիդ, մելամաղձոտ սիրով ջերմ՝  
Շոյում էիր այն «սարի մարալի» սիրտը տխուր...

«Փերիներին» տեսայ ես, արտասւաթոր, անձկագին՝  
«Վուշ, վուշ, Անուշ, վուշ, վուշ», քեզ կանչում էին հեկեկոն,  
Ահ, վերցնում եմ մի բուռ հող և սրտադող, լալագին՝  
Նետում եմ խոր, սև փոսի բերանի մէջ յօրանջուն...

Եւ ես տեսայ թէ ինչպէս «փերիների» թևերին՝  
Հոգիդ թառած՝ թռչում էր դէպի լազուրը անհուն.  
Մէկ էլ զարթնում եմ յանկարծ և տեսնում եմ իմ կողքին  
Լուսթիւնն է կանգնած՝ ոտաբութիկ ու տրտում...

Շիթեր, շիթեր արցունքի ու ձեռքիս մէջ մի բուռ հող,  
Ահա բոլորն՝ ինչ փնաց—սրտի մրմուռ, վիշտ ու լաց...  
Լուսթիւն է, լուսթիւն... և հոգուս մէջ կայ մի դող,  
Պաղ հեգնանքով մի թուժք հող՝ ջրել է լուռ իմ դիմաց...

ԱՐՄԱՆՏ

# ՍԵՅՐԱՆ ԵՄ

Op. 603

հոսք և ճրագ՝

Է. ԳԱԼԱՆԴՅԱՆԻ

SOPR.  
ALTO

TENOR

BASSO

դա ւի Ե դա ւի Ե սէյ թա ն Ե - Տ դա ւի Ե

Չի նաթ քո յիդ հէյ թա ն ԵՏ

դա ւի Ե սէյ թա ն Ե - Տ Ե աթ Լ Ե - Տ Կե սեր Բե ոն Տա ն

դա ւի Ե դա ւի Ե սէյ թա ն Ե - Տ

Խա յ Ե Տ Կը ԼԵ Բե Կառ ԵՏ

Ե յ յ թա ն Ե - Տ հէյ յ թա ն Ե - Տ ԵՏ

Կառ ԵՏ ա թի Ե աթ ա թի

First system of the musical score. The vocal line (treble clef) has the lyrics: *իս որով մի մա շարս րի առ փեկ մա լու մի ճը նա աշխա մար դու*. The piano accompaniment (grand staff) provides harmonic support.

*Deux fois pp. rap et morendo*

Second system of the musical score. It includes a piano solo section marked *T Solo*. The vocal line continues with lyrics: *սէյ բան եմ հէյ բան եմ եմ գու իմ մո լը հարս նա*. The piano accompaniment features a melodic line in the right hand and a harmonic line in the left hand.

*Tutti*

*Sop. Solo*

Third system of the musical score. It features a soprano solo section marked *Sop. Solo* and a tutti section marked *Tutti*. The vocal line has lyrics: *գան ի ման գան ի ման հէյ բան եմ դա եւ մո լըս փե նա ցու*. The piano accompaniment continues with a melodic line in the right hand and a harmonic line in the left hand.

*Tutti*

Fourth system of the musical score. It features a tutti section marked *Tutti*. The vocal line has lyrics: *գան ի ման գան ի ման հէյ բան եմ լար դա վա ռի կի բա կին*. The piano accompaniment continues with a melodic line in the right hand and a harmonic line in the left hand.



First system of a musical score. It consists of a vocal line (treble clef) and a piano accompaniment (treble and bass clefs). The key signature has one flat (B-flat). The vocal line has lyrics in Armenian. The piano accompaniment provides harmonic support with chords and moving lines.

զան ի ման զան ի ման հէյ ըան ե - յ հաս նն նկ մեկ մեր մու ըա պին



Second system of the musical score. It continues the vocal and piano parts. Above the vocal line, there are first and second endings marked with '1' and '2'. The lyrics continue in Armenian.

զան իման զան ի ման հէյ ըան ե - յ եմ խաղն ըով փաղն ըով այ աղ  
 զան ի ման զան ի ման հէյ ըան ե - յ եմ խաղն ըով փաղն ըով այ աղ



Third system of the musical score. The vocal and piano parts continue. The lyrics are in Armenian.

զի - ւ Նաւն ըով սաւն ըով այ աղ զիւ զաւի ւ զաւի ւ սէյ ըան  
 զիւ Նաւն ըով սաւն ըով այ աղ զիւ զաւի ւ զաւի ւ սէյ ըան



Fourth system of the musical score. The vocal and piano parts continue. The lyrics are in Armenian.

ե - յ զաւի ւ զաւի ւ սէյ ըան ե - յ զաւի ւ զաւի ւ սէյ ըան եմ

# ՍԷՅՐԱՆ ԵՄ

○

- Sop. Դալիւօ, դալիւօ, սէյրան եմ,  
T. Զինար բօյիդ, հէյրան եմ.  
Sop. Դալիւօ, դալիւօ, սէյրան եմ,  
T. Եար չեմ տեսել քե նման:  
Sop. Դալիւօ, դալիւօ, սէյրան եմ,  
T. Խօսք եմ աւել՝ քե կառնեմ:  
Tutti Սէյրանդ եմ, հէյրանդ եմ,  
Կանչեմ՝ արի, եւր, արի.  
Խոով մի մնայ, շուտ արի,  
Սրտիկ մալուլ մի մնայ.  
Աշխարհ մարդու չի մնայ,  
Սէյրանդ եմ, հէյրանդ եմ.  
Solo Ten. Դու իմ մօրը հարսնացու,  
Tutti Զան իման, ջան իման, հէյրանդ եմ.  
Solo Sop. Դու էլ մօրս՝ փեսացու,  
Tutti Զան իման, ջան իման, հէյրանդ եմ.  
Վարդավառի հիրակին,  
Զան իման, ջան իման, հէյրանդ եմ,  
Հասնենք մենք մեր մուրազին,  
Զան իման, ջան իման, հէյրանդ եմ.  
Խաղերով, տաղերով, մյ աղջիկ,  
Նազերով, սազերով, մյ աղջիկ.  
Դալիւօ, դալիւօ, սէյրան եմ,  
Դալիւօ, դալիւօ, հէյրան եմ,  
Դալիւօ, դալիւօ, հէյրան եմ\*).

\* Առաջին անգամ երգել է Թէհրանում, 1941 թ. Մայիս 11-ին, երաժշտագետի ղեկավարութեամբ տրուած համերգում: Ար. Եր.

# ԱՓՍՈՍԱՆԻՔ

Խօսք Ղ.Լ.Ի

Երաժշտ. և Պալանդերեանի

*Andantino*

Piano

Մեն, ուրիշների տերևները կախ անձրևին բրդոյ, վաղը կը բաժանեն,

վաղը չեն լինի ճիւղերի վրայ. վաղը կը փռուի ա մեն ամեն գեղ,

ժիջութեան երկ, ու տերևները կը մոռնան անյոյս ցեխերի վր

րայ: ինչպէն չընչել. ինչպէն չափստալ զարեան երեկոն,

ինչպէն չընչել իրիկացօցօդ ոստորի վը րայ.

ինչպէն չըտեսնել որ լուսանցեամբն լաօ րն քո

ուկըն ջրան րը փռում են փռում այտն րիդ վը րայ:

## ԱՓՍՈՍԱՆՔ



Տես, ուռիների տերեւները կախ, անձրեւի ներքոյ,  
Վաղը կը թափւեն, վաղը չեն լինի ճիւղերի վրայ.  
Վաղը կը փռւի ամէն, ամէն տեղ մի ցուրտ երեկոյ  
Ու տերեւները կը մեռնեն անյոյս՝ ցեխերի վրայ:

Ինչպէս չիշել, ինչպէս չափոստալ գարնան երեկոն,  
Ինչպէս չիշել իրիկւայ ցօղը ոստերի վրայ.  
Ինչպէս չտեսնել, որ լուռ անցնում են լաւ օրերը քո  
Ու կնճիւղները փռւում են, փռւում այտերիդ վրայ:

Ինչպէս չտխրել, ինչպէս չունկնդրել կեանքի հոսանքին,  
Ինչպէս չյառել խոնաւ աչքերը վառ արշալոյսին.  
Ինչպէս չկտուել ոսկրոտ ձեռներով այս անցնող կեանքին,  
Այս անցնող կեանքին—թէկուղ միշտ խաբող, թէկուղ  
փուշ ու սին:

Օ՛, ինչպէս, ինչպէս քո կամքի ընդգէմ, բաժանւել, գնալ,  
Անշան հողմավար ու գողգողացող տերեւի նման.  
Ինչպէս մի օրւայ թիթեռի նման թևերը բանալ  
Ու անհետ գնալ, առանց վերադարձ, չեկածի նման...

|                                                                                  |      |
|----------------------------------------------------------------------------------|------|
| 1. Երկու խօսք . . «Գալանդերեան» երգչիմբ. Վարչթ.                                  | 3    |
| Ա.                                                                               |      |
| 2. Նիկոլ Գալանդերեանի կեանքի և երա-<br>ժըշտական արւեստի հիմնական գծերը . . . . . | 7—48 |
| ա) Երաժիշտը . . . . .                                                            | 7    |
| բ) Արւեստագէտի կեանքի էական էջերը . . . . .                                      | 8    |
| գ) Ստեղծագործութիւնների պատկերը . . . . .                                        | 16   |
| դ) «Լալւարի որսը» օպերան . . . . .                                               | 23   |
| ե) Ազգեցութիւններ . . . . .                                                      | 25   |
| զ) Երաժշտական արւեստը . . . . .                                                  | 32   |
| է) Հայ բանաստեղծութիւնը Գա-<br>լանդերեանի երաժշտութեան մէջ . . . . .             | 35   |
| ը) Մահն ու թաղումը . . . . .                                                     | 37   |
| թ) Սգահանդէս . . . . .                                                           | 38   |
| ժ) Մամուլը և ապագիւր երգերը . . . . .                                            | 41   |
| ժա) Գալանդերեանի դերը . . . Արամ Երեմեան                                         | 43   |
| 3. Նիկոլ Գալանդերեան . . . . . Ռ. Գրիգորեան                                      | 49   |
| 4. «Սիմֆօնիներս Մացին» . Արա Տէր-Յովհաննիսեան                                    | 51   |
| Բ.                                                                               |      |
| 5. Զօներգ . . . . . Հայկ Աճէմեան . . . . .                                       | 54   |
| 6. Երգի վարպետին . . . . . Արամ Երեմեան . . . . .                                | 55   |
| 7. Ես երգել չգիտեմ . . . . . Դև . . . . .                                        | 56   |
| 8. Թւերը երգի . . . . . Ա. Արիագն . . . . .                                      | 57   |
| 9. Տխուր տաղեր . . . . . Արա . . . . .                                           | 58   |
| 10. Գոմիտասի հետքերով . . . . . Ռեդ . . . . .                                    | 59   |
| 11. Դո երգերը . . . . . Լևոն Բզնունի . . . . .                                   | 60   |
| 12. Լուսթիւն էլ, Լուսթիւն... . . . . Արմանտ . . . . .                            | 61   |
| Գ.                                                                               |      |
| 13. «Սէյրան եմ» (խմբերգ) . . . . . Ն. Գալանդերեան . . . . .                      | 62   |
| 14. «Ափսոսանք» (մեներգ) . . . . . Ն. Գալանդերեան . . . . .                       | 66   |



- 1—Սպահանքի Փեւիա գաւառը, ազգագրութիւն, պրօֆ. Հրաչ. Աճառեանի առաջաքանով. Նոր-Ջուղա, 1910 թ.
- 2—Իդէալիստը, պանտօմիմ. Նոր-Ջուղա, 1910 թ.
- 3—Առուղ Թարբուն Օղլի, Ա.—Նոր-Ջուղա, 1920 թ.
- 4—Պարսկահայ առուղներ, Բ.—Ամէր օղլի, Դուլ Եզազ և Արդին օղլի. Նոր-Ջուղա, 1920 թ.
- 5—Պարսկահայ առուղներ, Դ.—Բաղէր օղլի, Դուլ Արզունի, Դուլ Սարգիս Շրիշկանցի և Միսկին Ստեփան. Նոր-Ջուղա, 1921 թ.
- 6—Ձարմահալի ժողովրդական բանասիրութիւնը, Հ. Ներսէս Ակինեանի առաջաքանով. Վիեննա, 1923 թ.
- 7—Պարսկահայ նորագոյն առուղներ,—Միսկին Մատթէոս, աշուղ Ալլահ-ղէրզի, Մարտիրոս Մանուկեան, Միսկին Ստեփան. Վիեննա, 1925 թ.
- 8—Հայաստանի նկարիչների տմանախը, Արտաշէս Կարինեանի առաջաքանով. Փարիզ, 1926 թ.
- 9—Սեւան, Հայ նորագոյն կամպօզիտօրներ, Ս. Դադար—Վենետիկ, 1927 թ.
- 10—«Արեւստ», նկարչական և երաժշտական պատկերազարդ երկամեայ թերթ. Երևան, 1927 թ.
- 11—Նկարիչ Սեփիան Աղաջանեան, Երևան, 1927 թ.
- 12—Առուղ Ղուլ Յովհաննէս, Վենետիկ, 1929 թ.
- 13—Պարսկահայ առուղներ, Աշուղ Ամէր օղլի. Վենետիկ—Ս. Դադար, 1930 թ.
- 14—Պարսկահայ առուղներ, Վերածնունդի ժառանգար. Թէհրան, 1930 թ.
- 15—Առուղ Դրիգոր Տալեան, Ս. Դադար—Վենետիկ, 1930 թ.
- 16—Փոքանքներ Զուլահայ եւ Հնդկահայ բանասիրութիւնից, Վիեննա, 1931 թ.
- 17—Ռուսահայ քաւրների պատմութիւնը, սկզբից մինչև 70-ական թւականը (Թիֆլիսի պետական հայ Թատրոնի արտեսանների առաջաքանով). Վենետիկ—Ս. Դադար, 1933 թ.
- 18—Թիֆլիսի հայկական պանթէօններում, հրատ. Հանդէս Ամսօրեայի. Վիեննա, 1941 թ.
- 19—«Եալալի», Նոր-Ջուղայի ժողովրդական պարերգը. Վիեննա, 1941 թ.
- 20—Նոր-Ջուղայի 17-րդ դարի որմանկարչական յուսարձանը, Գերշ. Յ. Դարեգին Արքեպ. Յովսէփեանի առաջաքանով. Նիւ-Յօրկ, 1944 թ.
- 21—Իշեր Նոր-Ջուղայի որմանկարչութիւնից, Արշակ Զօպանեանի առաջաքանով. Փարիզ, 1945 թ.
- 22—Ակնագիւղիկու Աւետիք Իսախանեանի պօղկալի կիմանական գծերը, Նոր-Ջուղա, 1946 թ.
- 23—Առուղ Թարբուն Օղլի, Թէհրան, 1946 թ.
- 24—Մի անշաջօ ձեռագիր ազգարան, Թէհրան, 1947 թ.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007383

047

ԳՐԱԴԱՐԱՆ 25 ԳՐԱԴԱՐԱՆ

15 r

ЦЕНА

11  
20054

Ստանալու համար դիմել.—

Mme. A. MAKARIAN

Ave. Bahrami--Bidi No. 35

Tehran - Iran.